

13597

891.99

U-50

2003

ՀՈՇԿԱՅ ՂԱԼԻՆ ԽԵՐՆ ՈՒ ՀԱՍԸ

Կ Ի Ր Ե Ց

ՑԱՐԼԱԳԻ ԽԱԶՄՆԸ

ՀՐԸՊՐԱԿԵՑ Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇՍԶՆԱԶԱՐԵԱՆՑ

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Մոսկու վարդանեանի

1887

891.99

Մ-50

89199 810 22
Մ-50 սպ.

ՀՈՇՎԱՅ ՂԱԼԻՆ ԽԵՐՆ ՈՒ ՇԱՌԸ
75

Կ Ի Բ Ե Ց


ՏՄՐԼԱԶԻ ԽԱԶՍՆԸ

ՀՐԸՊՐԱԿԵՑ Կ. Կ. ՄԵԼԻԻ-ՇՈՂՆՍԱԶԱՐԵՍՆՑ

Թ. Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Մոլոտև Վարդանեանի

1887



38 213 ահ

Իմ ազիզ Ղլըցուց

ձեռն, պուճուրին, մարդին ու կնոջան,

տղին ու ըխճըկան

փէշքէշ ա անըմ

իւրան աչքայ հըռացած, մտքայ մուռացած

ՏՄԱԼԱԶԻ ԽԱԶԱԿԸ

Доз. ценз. Тифлисъ, 8 октября 1887 г.
Тип. М. Варганянцъ. Тройц. пер. д. № 11



(868
42.)

21435.60

2011

ՇՕՇՎԱՅ ԶԱԼԻՆ ԽԵՐՆ ՈՒ ՇԱՌԸ

Ա. ԲԱՐԵՒԱԿԻՐ.

(Նոր-Դար կազմերին)

Գերամեծար սհապ կազէթ կիրող.

Ղորթա ասըմ ըն քու կրգէթըմը մենակ կիրաւիաւ եւ ըշխր-
րաւիաւ կիրողներին ըս տեղ տամ, ամմա ես հունց անիմ վեր
վէչ էն ըմ գիղըմ, վէչ էն. ես մին չուցէ տմբլաչի մարթ ըմ
նոր Ղալան եկած, նոր լիւզուս պեցուած, հունց վեր կիրեմ,
գիտըմ ըմ երաս ծըծըղելու ըն ինձ մեազրա քցին. լեան էն չի
վեր հեալա էս դեծըմ իմ պըպսկան լիւզվաւ կիրեմ, ետնան
թա վեր դարու կանիս, ըշխարի էլ կրկիրեմ փիթիր չկայ:

Շօշվայ Ղալին խէրին ու շառին ջոնդ ու պոճախ չօնի,
վեր մին-մին շարիս, ըստեզան Հնգստան կըհասնի, ամմա
հինչ կանիս վեր մեր թոփխանան դէնը չի անց կէնըմ, ես
շատ-շատ քամու ճղացան չրու քեօհնայ հանգիստը, երի
դրվազան չրու ներքինը համոււմ, հեալա շատ փայն էլ հու-
զը փարտակ ըն անըմ, վեր լիւս աշխար չի տիւս կեայ, թէչնա
չէ Աստուած ա գիտըմ հինչ ըլալիւմ նի կընգնի մեր թոփ-
խանան: Մին էլ էս կայ, վեր ձեր կրգէթըմը մեր Ղալան շատ
պեն չըն կիրըմ, չիւն մեր համիայ մարթէքը իտի պեները եօր
չըն օնըմ: վայը եկել ա տարալ կիրողին վեր անըմը պեց ինի,
ըշխարիս լափը կըտան կլիին՝ Բսկեարանայ դէնը խուէգ տան:
էս էլ ասիմ վեր մեր շհարին խէր ու շառը ճնանչողը ըստիւր

ընդհար խնամի ա ինքն եա պելի, եա հրեան, հունց կրկարի Սաքիւն, եա Մաթիւն քէֆին նի կեայ՝ ընդրա անըմը կազէթ քցի:

Ամնա դէ ինձ մհար հինչ կայ, ես մին դրաղի մարթ ըմ, վէչ Սաքիւն անա ըմ վախըմ, վէչ Մաթիւն, վէչ Բղղըսարին. հու վէր ինձանա նղանայ, թող քինայ ցորտ ջիւր խմի. մին էլ խօսկը մեր մէչը մնայ, թա վէր տիւ ըտեզան մաններդ խղըցնիս վէչ, ըստեղ իսկի ինձ ճնանչող չինիլ, մինն էլհա ասիլ չի, թա տեղդ ծոխ ա, երկաց ընտեղ նստի, եա աչքիդ երայ օնք կայ:

Մախլաս, ըստրանք թողինք, տիւ եկ լեաւ անգուճ դիր մեր Ղալին խէրին ու շառին, թա Աստուծ կըսիրիս:

1.

Կեարուներին քրրգ-քարողա շատ խուսեցին կրգըթներըմը. հու վէր եր ար կենըմ՝ բոմիում ար մեր հուքեվուր դէրերին կլխին, թա քարող չըն տամ, քարող չըն տամ. մըղանըմ դորթա աբուռին քարող տուող դէր շատ չօնինք, ամնա էլհա Աստու տուածան մին էրկունը կըճարուին. մեծ պասին եա էրկան ուտըսին իւրանց խելքին կտրածան խօսըմ ըն. ամնա մազալուն էն ա, վէր մըղանըմ մի ըշխարի վրթապետ էլ տիւս էկա իւրան շնորքը նշանց տուաւ:

Ըշխարի վրթըպետին քարողէն սուամարանըմն ար ինըմ՝ էլ դիւրգեար, բաննահ, խառատ, զարգեար չար մընըմ, լոխ էլ կլխին ին հաքվում, մեր պարապ-տարապ համիէքն էլ պակաս չին ընտեղ. (ախար միւհտա թամաշան հիւր կըտան). խօսում ար խօսում մեր ըշխարի վրթապետը՝ սարան քօլ ընկնըմ, քօլան ծեօր, ծեօրան խիւթ, ես հինչ գիւգամ, ըշխարքիս տական փոնըմ ար, երկինքաւր տիւս կեամ. տնաշէնը ծով ար ծով, ուկիանոս ծովը . . . :

Մեարտի տըսնօխտին մեր ըշխարի վրթըպետին տուած քրրողին սիւր սթիլ ջամն ար՝ թա էրկու ջուռայ օրէնք կայ

ըշխարըմը՝ Ըստրծու տիրած, մին էլ մարթու: Ըստրծու ուրնքնին մուքը կարըմ չընք պահինք, չիւն շատ զօռքայ ըն, մեր խելքը հանըմ չի. մարթու տիրած ուրնքնին մուքը պահըմ ընք, ամնա էտ էլ քեամիլ չըն, հեալա քիւրան տիւս չըն եկալ, վէր վախտ քիւրան տիւս կըկեան ու մուքը կըպահինք, էն վախտը աշխարս մին ըրքըյոթիւն կըտեռնայ, մարթէքն էլ Ըստուծնէ. . . :

2.

Տմբիս թխեցին, մին սեաս եր իլաւ, թա մեարտի երեսունին սուամարանըմը ասեղ քցելու տեղ չի կար, հալալ իրեք սհաթ խօսից մեր ըշխարի վրթապետը. էս դեծնըմ ըւտորանին խոր-խոր տըղերան ար խօսում՝ Գրիքոր Լուսավերջան, Թրգմընիչներան, վերջն էլ երայ պերաւ լիւտըրկններան. ասից վէր մեր մունթերին մինը լիւտըրկանու ախպեր ա, պիժի տեղաւր ժւղեցալ ա հընկորանցը խելքա տանի լիւտըրկան շինի, վէր գիտացի, էն սհաթին տիւս ըրի. ետնան տանիքը վրթըպետու նհեա մայըհաթ ըրի, էն խօխին կնչեցի յղէ պերի. վերջն էլ խօխին լիւտըրկան ախպօրը ծէն տուի, շատ տէսան, տէսան խուսեցինք՝ ես ըսեցի, նա ասից, նա ասից, ես ըսեցի. վերջը լիւզուն կըպեցի յղէ քցեցի: Լեաւ չըմ ըրալ, ա ջամհաթ. (աֆիարիմ, աֆիարիմ, կերածդ քեզ հալալ ինի, ըստեզան ընդեզան թարիֆըմէք):

3.

Սպրիլի վեցին ըշխարի վրթապետը էլհա մին օրհնուած պերանը պեց ըրաւ. էս դեծնըմ տեսալ ար վէր ժըղոյլուրթին շատ տիւր ա եկալ լիւտըրկանին նհետ իւրան խօսածնէն, էլհա լիւտըրկններան կցեց: Խօսից, թա Լիւտերլ ապերը հու ա իլալ, հինչեր ա ըրալ, վերջը էն տեղը պերաւ, թա մեր հայերը վէր լիւտըրկան ըն տեռնըմ էտ ընտրանայ ա, վէր քարող տուող դէրեր չօնինք, իլածնին էլ թեամբալ, կռուարար, ան-

խելք մարթէք ըն. խէ չքք քինում, ասից, առաջնորթին ասում
 եա կթղըկտսին կիրում: վէր ձեզ մհար քարող տուող դէրեր
 օծին, խէյքք եանի քօռ, բա էսքան քարողնէ ըմ տամ, տեանում
 չքք, վէր սարու նման ստեղ կաղնած ըմ: տիւք եկէք ինձ տէր-
 տէր շինեցէք, տեսէք հունց ըմ էտ լիւորըկաններին պիւնը
 ցրեւ տամ: ես մհէգսագէնը շափաթը էրկու իրեք հետ
 քարող ըմ խուսելու, եկէք, եկէք թմաշայ ըրէք, վախիլ մէք,
 փող չըմ ուղելու, թեաքչա ինձ տէրտէր շինիք, մին էլ թողիք
 վէր չըրու մահս մուսթերին եա ուստա, եա ուստաքաշի ինիմ:

4.

Ապրիլի օխտին ըշխարի վրթապետը խօսից անքննելի ու
 քննելի պեններին երայ. ամեն մարթ՝ ասից, քննելի ու անքնն-
 նելի պեններ շատ օնի:

Անքննելին էրկու ջուռայ ա, մին անքննելի կայ, վէր
 վերջը քննելի ա տեառնում, ձեզ ըրէնակ երկիրը, վէր առաջ
 անքննելի ար, վերջը քննեցին. մին էլ կայ, վէր անքննելի ա իլալ,
 միշտ էլ անքննելի կրմնայ, ձեզ ըրէնակ Աստուծ: Հինչ վէր
 անքննելի ա մեր խելքը կտրում չի, պեղմա աչքնէս կապինք
 հատանք, անքննելին քննելը մեղք ու կրակ ա: Ամնա հինչ
 վէր քննելի ա, պեղմա քննինք. քննեցէք, ինձ էլ քննեցէք, ես
 էլ ձեզ կըքննեմ. քննելաւ շատ առաջ կըքննանք, շատ. շա-
 տերը կարում չըն քննին, մին քանէն օղըմ չըն քննին, մին քա-
 նէն էլ չափան տիւս ըն քննում: Չափան տիւս քննողնէն շատ
 վնաս տուող մարթէք ըն, Աստուծ հեռու տանի ընտրհանցա:

Իէ բօլ ա, հինչքան խուսեցինք, մհէգ էլ ժամ քինանք,
 աղօթք անինք, վէր մին փարայ անքննելի պեններ ձեզ մհար
 քննելի տեռնայ. . . :

5.

Մին ամէս չքաշած՝ անքննելին քննելի տեռաւ. տրմ-
 բըլիս թխեցի մին զիլ սեաս եր իլաւ, թա մին էրկու մարթ
 թոխա ըն շինալ տուը-տեօնը ընկալ ծեռք քաշել տամ վէր ըշխա-
 իր վրթապետին տէրտէր շինին Ազընչեցուց ժամին երայ, վէր
 հարը երգայ քարող տայ. ամնա դէր Ակունը եա Հախին մը-
 եռած պեղմա ինին, վէր էտ պենները կիլօխ կեայ. ասըմ ըն
 մեծ ըլալիւմ ա ընկնելու, տեանանք, էն էլ հեալբաթ տմբլիս
 կըթխիմ:

6.

Տմբլիս թխեցին Ալաւն չաւ ըրին, թա ըշխարի վրթապե-
 տը մեր շհարին կնանոցն ան ըխճըկորանցը բիլէթ ա զարկալ,
 վէր կեան սուամարանը հաքուին. մեր կնանէքն էլ հէնց էտ
 ին օղըմ: մին գեարան գիղացին թա եա փսականչ ա, եա
 նշանտիրեք, եա ղոնախլըղ, հզրվեցին վէր քինան պատառ
 աչմիշ ինին, բոխճենին պենան. մին էլ վէր հսկացին վէջ թա
 օտիլ խմել չկայ, քարող ա տլական. «ցաւ քաղի նա, հողիս
 ընդրա կիլօխը» ըսելաւ քուռը փեշման տղըրնէն նստեցին:
 Ամնա Աստուծ պահի էլհա մուսթերին, քեասիբ-քըսիբու լօխ էլ
 եկալ ին էտ օրը: Խօսից, խօսից մեր ըշխարի վրթապետը
 շուայուլթիւնու երայ. ասից վէր մեր կնանէքը մեր տօնը քան-
 դըմ ըն, պեղմա առաջը առնինք, մին հընկերթիւն շինինք:
 էտ հընկերթիւնին պըյմնէն էս ինի, վէր կնէկ արմատին
 էրկու ծեռքա իւել շոր չինի, մինը տնստոնի, մինն էլ ղո-
 նախլըղի կենայ: Կնանէքն ծեռք պեղմա քաշին իւրանց անգու-
 ճի ուլերան, ճկատին քուրուցան, ծեռքին բրասլետան, վէս-
 կի սհաթան, մններին մտընան. տղամարթէքն էլ Պեխի ախ-
 պիւրը քէֆ քինալան, պապիրոս քշելան, գինի խմելան, մին
 խօսկաւ՝ Ալալին սովդաքեարներին, զարգեարներին, բախկալ-

ներին, շիրաչոցը, դասաբներին լացը կտրցնին: Հու վէր էտ պեները կանի, ասմար տարին իրեք մանէթ կրտայ կնդատորին, վէր խարջայ իտի թիթեւացալ ա, հու վէր անիլ չի, ընդրանայ շորափի ինք կօնինք. . . :

(Ես իմ Աստուծը, հախն ա Ղալին կնանոցը, համ շոր չկենան, համ էլ տարին իրեք մանէթ կնդատորին տան. անք գիտրմ չըս է, պարուն կազէթ կիրող. Ղալին կնանէքը հունց ըն մուգին եախան փունայ է. էլ պերց, միւթաֆքայ չի մնացալ տները՝ թեարքներին կապած, տօնբատօն մանն կեամ: Աֆֆարիմ ըշխարի վրթապետ, հիւքիտ ըրքըլթիւնըմը պլպլայ, բեալքեայ տիւ ինի մին եօն անիս, թէշնա չէ մեր կնանէքը քանգեցին քարուատակ ըրին մեզ, կլինէս տարին. «էս պեր, էն պեր. ըտրան հաւան չըմ, էս մէգ մօղա չի», ես հինչ գիղամ, հզար ու մին ծիրտի-պիրտի պեներ. . .):

7.

Տմբլիս թխին ու սեաս եր իլնիլը մին իլաւ, թա ըխճկորանց շիօլին ուստարաշի ըն ճոկալ Նըրըման-բէկին, վէր ըրեւտուն տարի թքլրական շիօլըմը վրժըպրտոթիւն արալ, վերժը տեսալ ըն վէր իւրան կլխու ընդեղան ծեռք քաշողը չի, պենցեա ըն կապալ, վէր քինայ տանը նստի դինջանայ: Մէգ մեր հուքըպրծնէն սուաբու մհար պերալ ըն ուստարաշի շինալ. ասըմ ըն հայերէն շատ թեամիւզ գիղըմ ա, ինքն էլ շատ արուին հմանկոտ մարթ ա, հանց հմանկոտ, հանց հմանկոտ, վէր մունթին սխալը հմանցըմ ա թա դիւզըցնի. . . :

8.

Հու վէր ասըմ ա մեր Ղալան ետ ա մնացալ, խաւար ան, աչքը տիւս տրաքի, սոտ ա, հատաս վէչ: Լիւսավերութիւն, լիւսավերութիւն մրզանըմ ա. մեր ազիզ պահած կնանէքն ու

ըխճկերը վէր տեսնաս կլուքումը փոռոնի կտրելիս, մաթ կը մնաս. բուննան աւալա շախշախի, ահմեադի, միրգէյի պար կը կին. մէգ վալս, կադրիլ, պուլկովի մզուրկա ըն պար կեամ. թառին, սազին, քեամանչին էլ հաւան չըն, փորտուպեանը հու ըրեալն ա մօղան: Հինչ ասիմ է, ուսալանցի կուտրատիլը, անվէտ, անծառ, անծաղիկ բուլվարըմը թրթշնած մանկեալը, ըխճկորանց հմարձակ հոհուալ, քոքուալը, սլէթա-սլէթա խըշկոտալը վէր Ղըրցէք տեսնըմ չըն, ասըմ ըն. «ըհը, լհա էս լիւսավերութիւնը վէր կայ, փառք քեզ Աստուծ, անժախ վէր մունք էլ մին լուսավերուեցինք»: Մախլաս, պուկընիգին կնգանան կցած չըրու քեօմիւրջի Մեքիւն կնէգն ու ախճիկը էս իրեք տունըմը հանց լիւսավերուալ ըն, վէր էլ մեր պօլից խանան օղըմ չի շհարին ֆանարնէն քշերը ջափայ քաշի վառի, չիւն ժըղովուրթը քըրըքըլա լիւս ա տամ. . . :

9.

Տմբլիս թխեցին սեասը զիլ-զիլ պըրացաւ, թա ընցած շաքթին մին զօրբայ հրսնըրմ շօնը տար ճնանցըմ չար: Արմըղային թիւնդ վախտը գինու հարարաթան էրկու մարթ ըն էն դիւնեան քեցալ, մին էլ մին չալ էշ: Մարթէքը վէչինչ, լհա էշին դեարը խեղճ մնաց, ըրտասունքը ըչկերըմը տօն քինաց. խեղճ Բարխուդար. . . խեղճ. . . :

Է՛հ, հինչ ասիմ է, հունց վէր տեսնըմ ըս Շօշվա Ղալին խերին ու շառին վերջ չի կայ. թա վեր սաղ մնացի, մին-մին կըկիրեմ. մէգ տմբլաս ճըղուալ ա, քինըմ ըմ կրկատել տամ, ետնան մին դինջութիւնաւ էլհա խոնար ծառատ ըմ:

Տ մ բ ւ ա ջ ի Խ ա ջ ա ն Գ :

Բ. ԲԱՐԵՒԱԿԻՐ.

Գերամեծար սհապ կազէթ կիրող.

Էս մոռտերըուը Սարին էն ղոյն ի քեցալ, վէր ճղուած ամբլիս մհար էշու կաշի ճարիմ, համ էլ ընտեղի անտար ընտէրու ծմրկներան էրկու հիւնի կոպալ կտրիմ ամբլթակի. փանք Սածու, լեաւ ղայիմ կաշի ճարուեց, մին ընընցըվէրի կրկտեցի, կուպնին էլ մոխըմ տուալ հարալ. վէր վախտ մին խէր ու շառ պտահի, կրդուըցնիմ սեսար քեզ հսցնիմ. ամմա վէր գիղաս հինչ քան ըմ չրչարուալ, հինչ ջափէնի ըմ քաշուլ, կասիս աֆֆարըմ ամբլաչի Խաշան, կէրածը քեզ հալալ ինի:

Բեալքեամ պեն ա հրցնիս, թա խէ, Ղալին էշերին կաշուին հինչ ար եկալ, եա Պեխի ախպիւրին ծիւրերին հիւնի ծառը կտրվալ ար, վէր եր ըս կացալ սարին էն ղոյը քեցալ. խօսըդ շքեարաւ. մեր Ղալին էշերին թիւ ու համբարք չի կայ, թոր վէր շու տաս բօզ ու չալ էշու կրպտահիս, շատ վախտ էլ գրդըվարներին երայ մինըմէջ կրպտած, վէր մարթ համութ ա բաշըմ քշտաւն անցկենայ. եա խէ հեռու քինանք. մեր թովխանըմը խրէգ ըն ինըմ: կիւրականց կիւրակի եա շրփթը մէջի էնքան հատըվըմ ըն, վէր ասեղ քցելու տեղ չինըմ: մին ղարիբը վէր տեսնայ, կրգիղայ թա լհա էշու եարմուկայ ա. ամմա հինչ կանիս վէր խեղճ հյլըններին թկեյան ու բզբըզելան կաշին ծկծկոտվալ ա տեռալ շտարար, էլ ամբու եարամիշ չինըմ: . . .

Հիւնի ծըռերին մհար հինչ ասիմ. հշտեղ ման կեաս կայ, ամմա մեր մէշաբադին թիւնդ հրաման ա ըրալ, վէր ծմական մին ծիպլի կտրող էլ չինի. վայը Կեկել ա ընդբա տարալ, վէր մին շելակ չրչոփ պերաւ տօն, էլ աբեշիկին ղամչուն տական պրծնիլ չի, հեալա շտրափը դէնը կենայ. ամմա դէ հինչ կանիս վէր Պեխի ախպիւրին քէֆանողնին տրտրներան կցած չրու բաշմախի Վանին շաբաթ չինիլ, վէր խըրվաշու

մհար իրեք սածին փաս, չերին, իսկի ըսրա մհար զակօն չի կայ. մինն էլ հա հրցընըմ չի, թա էտ հինչու երայ ըք. . . .

1.

Օքստոսի տասնօխտին կրկատուած սնգլազղիս թխեցի մին սեաս եր իլաւ, թա մին քանէ ջահիլ-ջհիւլ հաքուած, թխատրն խաղ ըրալ Կվկասըմ քեասիբ-քըսիբու լեաուժիւն անող հագերուժիւնին մհար. ատըմ ըն շատ լեաւ ա անց կացալ, շատ լեաւ պեներ ըն խօսալ, ամմա թամաշաչէքը հանց շատ ըն իլալ վէր հաքուած փողը մին պենու քեարթալ չի տեռալ: Աղբաթը խէր մեր հարուստներին, հիւր տօն վէր բիլէթ ըն իլալ ղարկած, վխեցալ ըն ծեռք օտան եղտոտուի, իրեան ջրաւը ետըն ղարկալ, հեալա մին քանէ ուշուցնէ էլ հետը վէր խաթրներին ջմնայ, մեազայ անին. . . .

Ա խ, պենը կտրած ջահիլնէ, թա օղըմ ըք լեաւ անըմ. ախա պիրիք, տիւք էլ մարթու ջարգ ընկնիք, ձեր խօսըք տափը չքցեն, մէյմուն եա արջ պիրէք պար ըծեցէք, եա չէ ցիրկ փուղթաթաւ եր կալէք, վէր փուխնհադի կնանէք ծիին երայ պար կեան, մեր Ղլըցէք դեաստայ-դեաստայ հաքուին, թըմաշայ անին, մանէթնէն էլ փուխայ, թա չէ հշտեղ մարիֆաթ տըմնայի, խելք, շնորք սըվըրեղի տեղ ա, գիտըմ չըք Ղլըցէն ընտեղան փախած ա, քեանդիր կըքցի բողազը կրխեղդուի, վէր կապէկ չի տալ. . . .

2.

Տմբլիս ծեռք չի նի եկած մին սեաս եր իլաւ, թա հիւքարծընին խօսը տուած ըն իլալ մին վրժըպետու վէր սուամբրանըմը տեղ տան. գիտըմ չըմ հոնց ա ինըմ օքստոսի տասնօխտին ժըղովըմը վրժապետը ղալաթ չի անըմ հուքարծըներին անգիւնը փունըմ մածնին սեւ ասըմ, խեղճին էքըր ատկաղ ըն անըմ:

Այն, պիճի վրժապետ, ախր խելքիդ խնչ ըս շատ զօռ տամ է՛, գիտրմ չք՛ս էս էն աշխարքը չի՛. քեզ ասրմ՛ըն մա- ծունը սեւ ա, դու էլ ասի սեւ ա էլի՛. ըտեղ քեզ հինչ զօռ ա հանրմ: Քու հախն ա, դէ քինա՛ խելքիդ տրօթուն ըրա:

3.

Տմբիս չթխած մին սեաս պցրացաւ, թա հինչ մարքայ վէրտանրմ ըն կնդատորը մըտրըքրկանու եա օրիշ խնդիրըու մհար, օթ՝ օր կրախտին ըն անրմ ծոխ տամ, թա վէր նչըղոթուն օնի տիւս կեայ. էտ մըքոցը շատ փայը ըտեղ հուքին տամ ա ու մին ըստուծաւէր մարթ հաքըմ ա տանրմ թաղըմ, իւրան հիւքուին վարձք անրմ, տրրերին էլ հեալա մխիթարք ասրմ:

Տըսնողնէ ա իլալ վէր էտ մըուլտոնէնքը քուստուն օրան ետը մին-մին եր ըն կացալ սաղ սալամաթ ու կնդատորին մը- դակաւը էլհա նի մտալ. թա հաւորմ չըք, նարաշաթին անա հրցրէք, ես պենու խաբար չրմ:

4.

Մուս ու փուս մին ծէն ա ընգալ, թա մհէգաաղէնը հու վէր ծմական գկեռ, սիզը, մհասուր, շիւոր, տղզան եա քըլ- խընձոր քաղի, խարջ պեղմա ինք օնին: Խեղճ քեասիւր-քիսուք բարու հասրաթ պեղմա մնան:

Բուննան աւալա՛ չուցէք եա Ղլըցէք տիւս կրկին ծմակը. իւրիւգիւնը վէրը պարկը շտրաւ լիգը, վէրը գօղը եա քը- թիւլամանը մոշաւ, վէրը քթոցը հիւնաւ, վէրն էլ շալվարին էրկու թայը տղզանաւ եա գկուաւ լցած հեալա խուճանաւն էլ պիրանը գիւզակած, օսուքը քցած տօն կրկեար, խօխայ, ըրախայ կուրխընին, հնգեր հրեւանու փայ ու պեթին կըհա- նար, մհէգ այամը հանց փխացալ ա, վէր էրկու վննանուն

էլ բաճայ չի կայ, կիւլիւ, չըղալու, ըգուաու, քչըղակու մչանք էլ խաթր չօնի, վէր էտ ծըմըկներին Ասծու տուած ը- ուուզան ինքն էլ շահուի. . . : Վայ քու օրին, քեասիւր, գկու- հասրաթ մնոյական ջանիդ մատաղ տմբլաչի Խաչանը, բա քու- ճարը հոյնց կինի. . . :

5.

Տմբլա հեալա տանան տիւս չար եկալ, վէր մին սեաս եր իլաւ, թա հուճի մին ժեշտի թախսափուշ շինող պեն ընե- լիս մին կտրայ կըլկոնձի ա տամ վէր ընկնրմ տափը, սաղ- սալամաթ պրծընրմ. էտ ուստան իւրան մաքըմը կուրկուտ ա քցրմ, թա վէր ես խտի պցրըթիւն ա ընկի սաղ պրծի, ըստեղ մին պեն, անքննելի պեն կայ. Աստուծ ինձ պահալ ա, վէր քինամ իւրան զուր տեռնամ, իտի էլ հսկըցնրմ ա հնգեր հը- րըվանու, անսէս քիլըմ Ղաղանչեցունց ժամըմը շապիկ կէնրմ, դպիր կաղնրմ. մհէգ ասրմ ըն էտ ուստան օղըմ ա տէրտէր տեռնա, Ասծու հրամանը կըտարի, ժըղովուրթն էլ շատ օրախ ա էտ ըստըծատուր պենին երայ:

Հունց վէր տենրմ ըս, պարուն կազէթ կիրող, տէրտէր տեռնալը մհէգ շատ հշտացալ ա. բուննան աւալա՛ տասը տա- րի տըրըքըլթուն կընին, էս գուրծըկալին, էն ընթամին տօ- նը եղրպօլիկ, մըծնըքսակ, հաւ-ձաւ, ճոտ, ծիու, մթալ, միդահաց կըպիրին, վէր պենը դիւզմիշ կինար, ետնան իրէք հարիւր անձալ մանէթ էլ ըչըհամիկը կըտուին, վէր մինը տէրտէր կըտեռնար. մհէգաաղէնը էտ ինիլ չի. թեաք մինը լոք տայ եր ինի մին պեցուր թախտափուշու կիլոխ, ընտեղան թոպուլ ինի, թա վէր սաղ մնաց, ըստըծատուր տէրտէր ա հու տէրտէր, մեր ժըղովուրթը ասկազ չանի:

6.

Ամեն տարի պուլիտկացի ըն անըմ էլհա մեր ժըղովուր-
թը հասկանըմ չի, վէր կնդստորին մարթէքը իրանց հօրը փահ-
լան չըն, վէր միհստայ աչք քուռըցնին, մէջք կտորին, քշերը
անքուն, ցերեկը անդրար հասու հհասու, մըուու, կենդանու
մհար պեն դիւզըցնին:

Աըմ ըն նոր տաքսի ըն տիրալ, վէր միննաթէքը մհէգ-
սադէնը սեկլետարին մին կիլոխ շեաքար պերին իւրան չայաւը,
ընթըմներին ըըհամիլիւր մին էլ հարդան բիր խանձած խո-
զի կեօծի (ամմա էրկու տրրկանայ սակաս չինի), միրզոցը
հաւ, ճոտ, քուլլտակու ձիւմը, գեանդանբիր էլ մըզուկ,
շկիլպիլիթ, չուրաթան. գուրծակալ դէրին քարանը կակուզ
հինչ վէր կայ. տօռը պահող գեադին էլ սրտին բղխածան,
ճիւբին իւլցածան: Քու արեւն ըմ ասըմ, թորա թա էլ իտի
եզալի փեշակ ինի. վէր մին պիծի ես էլ կիրափաւ կրի
իւրիւր քցիլ է, անսէս տմբլաս վէր կրտինի, քինի լեազաթին
կնդստուրական տըռնի:

7.

Տմբլիս թխեցի մին սեաս պցրացաւ, թա սեկտեմբերի
վեցին ըխճըկորանց շիօլին դռները պէց ըրին. խիլայ մարթ,
կնէգ, խօխայ, ըրախայ կար հաքուած. ըշխարի վրթապետը
սրտին էն քիւնջը պուճախան քլքլցնելաւ մին քարող տուաւ,
լեաց իլաւ, լցըցրուց. տեանըմ ըք, ասից, իմ լեացը. մի լեաց
կայ ուրխութեան, մին լեաց էլ կայ տրտմութեան. մհէգ ես
ուրխընստայ ըմ լեաց ինըմ, թմաշա ըրէք, ինձ իշեցէք. (ըս-
տեղան ընդեզան ճեներ՝ «տեանըմ ընք, տեանըմ. խէ, քոռ չընք».
եանան կարթից մոռնիթերին անըմնին, ամմա շատ մազալու
ար. — Մաշինկա, Վառինկա, Օլինկա, Կատինկա, Սոնիչկա,

Լիզինկա, ես հինչ գիդամ՝ հզար ցուռայ սրտընու անըմնէ
շիւրը-շիւրը թափըմ ար. խուխոց մարերն էլ՝ Հուռին, Վա-
ռին, Չառին, Շուղին, Սոլթին, Գիւլին ծլուճագ հանին ինըմ
պըռըշնէն ետ տանըմ, եանի տեսէք-տեսէք՝ էտ Մաշինկան
եա Լիզինկան իմ պահած մըճըցրած ըրախան ա:

Մինը հըցընիօղ ինի. խէ, Հայոց կիրոց անըմնէն կլխալ ըն,
վէր մատուշկոցը անըմնէն ըն տինըմ խուխոցը, եա, ա վրա-
տեսուչ, տիւ խէյ ըս դաւթար քցըմ. կարըմ չըն թրքմանել
տաս, վէր մարթ մին պեն հսկանայ մէջան. բա Նըրըման-բէկը
եա էն փափուկ վրթապետը հինչու մհար ըն:

8.

Տմբլիս չթխած Ղալան մին վլլոց ընկաւ, թա սուճա-
րանի գիալուրներին ախալիւրը ցմաքուալ ա, մհէգ ճիւրը պի-
դի կնդստորն ա ախմիշ իլալ, վէր խեղճ միրզէնին, անթամ-
նէն ծարաւ շլրտորուին, համ էլ հուքեուր դէրին գիճա-
բախաննին մին-մին ճրուին: ժըղովուրթը աչքերը հուզըղու-
րելաւ թմաշա ետ անըմ, էլ հըցընըմ չի թա էս ճիւրը վէր
քիւֆիթայ օտողներին ճեանգն ընկաւ, բա սուճարանին ետ ըխ-
ճըկորանց շիօլին խուխոցն ու վրթըլտներին հինչ պեղմա
խմըցնին. ախր Մարտի ապերը ճիւր կրելաւ ճար կինի. մին
տիւրիւր եկէք է, բեաս վէր օրան մհար ըք պահըմ ձեր
շնորքը, վրթելուրն էլ անց կացաւ. . . :


9.

Տմբլիս թխեցի մին դմբզմբոց ընկաւ, թա Ղալին հեա-
քիմնէն իւրանց փշակին շատ լեաւ ըն դուլլուզ անըմ, հըշ-
տեղ մին եզալի տեղ ա ինըմ, քշերին կէսըմն էլ չախ ըն ընգը-
նըմ, լհա վէր պենը թեարսլըմ ա քեասիբ-քիտուբու կեալիս,
օրը ցիրեկաւ էլ վէնըմ փոխըմ, էտ հեաքիմներին նազ

2143560

1001

268 42



ու սազը տեսած, մէկզ ասըմ ըն դռնըվարդայ ունիստուվեր-
տըմը կուբար վրայցրած հեաքիմնէն ըն մօդ ընկալ, հինչ նչա-
ղու կօշտ ասին քինըմ ըն, հինչ ջուռայ ցաւ ասին բօշկըմ
ըն վրնըհախկին էլ ճրի գին: Էտ հեաքիմներին սլիվնը,
ծիլին, նեշտարը վէր մարթու նի ա կեամ, լեաւ ջուռայ ջու-
ռայ հեաքերը հու վէր կող ա տամ, իրեք օրըմը բլբիւ կրտ-
րած եա տեղան եր ա կենըմ եա էն դիւնեան քինըմ:

Էտ թեազայ հեաքիմներան մինը էս մուտերըմը էլ հա-
մինին թեւեր ա տուալ էն դիւնեան թռքըալ: Աստուծ պա-
րի ճանապարհ տայ քինացողին, հեաքիմին էլ իւրի շնորք:

10.

Տմբլիս թխըմ ըմ սաղ ըրարած ըշխարքին իմաց անըմ,
վէր մեր Ղալըմը աթաղան-բաբաղան մնացած մին սիւրու
փաղչի, ջինդար, գեարի քցող, կոռնը չափող, ըրթքարար,
կիրու եշող, սրտըմնայ հաքող, վախ չափող, դեանակ քցող,
ես հինչ գիդամ՝ հզար փէշայ քեամ մայեա կնանէք կան,
վէր սաղ տարին մեր շհարին խալխին խելքին աղ ըն անըմ,
իժան-իժան ըշխարիս շաւը ընդրանցայ հուրընըմ, հշտեղ
բախտ, դեօվլաթ կայ ընդրանց հիւրթաւը, դըռնաւը եր թափըմ:

Բախտ, բախտ մեր շհարըմն ա. հշտեղ մեաննանըն-
բեթար քեամբախտ տմբլաչի կայ, կոտը ընկած սովգաքեար,
չիները եր կալած ջինուլիկ, աղ տիրած խիարու նման տըղ-
նըկոթած, լեպուերը կախ պաուաւ ախճիկ, անծոխ, անծըլուլուրթ
քհանայ, տըռնըտեօռնը ընկած վրժապետ, գէմբուչին խելքին
եսիր մնացած տընրիեսայ, հարսին ծեռքին էրվըմ սկեսուր,
եա սըկսվորը ծեռքին խրավիլում հարսը, բախտը ճկաւերն
ընկած միրզայ, թող հստեղ կեայ, լոխչին էլ տեղ կայ, լոխ-
ուց փակուած բախտն էլ պեցանող կայ. . . :

**

Դէ էլ հինչ կիրեմ, պարուն կազէթ կիրող, կիլօխտ շատ
ցըրցրի, քեզ դընգեասար ըրի, կըբախշիս, տմբլաչի մարթին
պենը փէշակն էլ էտ ա. ես էլ ըմ օղըմ վէր մին մարիֆա-
թին կիր կիրեմ, վէր կարըմ չըմ, հո՛ւնց անիմ:

Մեր տան խօխայ, ըրախայ տընհաւայ քեզ շատ ու
շատ անճանօթ պարով կանին, ձեռքտ կըպաչի մեր Կեափին:

Քու խոնար ծառայ
Տ մ բ ւ ա չ Ի ա չ ա ն :

Գ. ԲԱՐԵՒԱԿԻՐ.

Գերամեծար սհապ կազէթ կիրող.

Իմ էրկու կըճարօտ բարեակիրերը վէր տիպալ չըն, էլ
օր չի անց կէնըմ, վէր մեր Ղլքեք մոռնըշոթուն չանին,
տղամարթէքը մին դղան ըն կիրմիրած շամիուր կող տուա-
ծու նման հետաս ընկալ վէր պիւրթ տան, բեմբակ կիզին,
կնանէքը մին. էլ անէճք, պղէցք չի մնացալ Ղրբաղըմը, վէր
էս էրկու ամսուը մեր օխտը պորտին երայ չի թափին: Տըմ-
բլաչի Խաչանը կասիս լհա լոխչու աչքի կիրողն ա, վէչ հըր-
սընքու ըն կանչըմ, վէչ նշանի, վէչ փսրկանչի. հեալա էտ
դէնը կենայ. մէկզ էլ ասըմ ըն խօսկ մինն ըրալ վէր էլ Խա-
չան անըմաւ տմբլաչու տօն ջթողին. ես գիտըմ չըմ, հիւր ըմ
մին չօռ ասալ, հիւր ըմ պրանաս մին փիս խօսկ հանալ, վէր
իմ խուրդայ խուխոց ուուլին կտըմ ըն:

1.

Փառք Ասծու, ես խալիսին նման եր չրմ կացայ չաւ ըրայ, թա Ղալին պտկան ծաղկած կնանէքը իւրանց մարթուց ջու-
բըմը էլ բեարաքեաթ չըն թողայ, լոխ տուալ ըն աւլեան-աւ-
լեան դերեաների՝ զառ ու զուամաշ ճօթերի բոխչենին, սան-
դուիննին լցալ ու թոռին, ձիւնին, ցեխին, լելին մէչաւր քաշ-
քաշ ընելաւ շեափաթը մինը մաղբուն ըն անըմ տինըմ ընտեղ,
ամմա իւրանց խուխոց մ՛հար զիմիշ չըն անըմ էրկու շահու
թողթ առնին, եա իրեք ըբասու մին կիր, վէր կարթին,
խելք, շնորք սլերին, մարթ տեռնան:

2.

Ես ասալ չըմ, իսկի մոկաւս էլ անց չի կացայ, վէր ա-
սիմ՝ Ղալին ազիզ-մազիզ ըխճրկերքը լիւսավերութիւնը գի-
տըմ ըն թա Տըռընգիստանայ եկած իւրանց շըլըպին տուռո-
նու, չարդու եա քջըզակու թեւին երայ ա, եա իւրանց
քիֆըմը խեխտած մէչքին կանանց կեարմիւր լենտին ու շան
կաշուայ շինած սեւ ու սիպտակ փեչատկոցը, եա չէ ուս-
վանչի մայեա-տվայայ ընելին, պուլկովի մզուրկա պար կեա-
լին. ամմա գիտըմ չըն թա իւրանց կրթմունքին, զալամին,
պընըթիւնին, ձեռքաջրին, ծանդր-ծնդրեանայ տանը, տուանը,
մրթըմէչի նստիլ եր կընալին երայ ա:

3.

Ես ասալ չըմ, խէ պէլ ըմ, վէր ասիմ՝ Ղըցուց նշան
տիները, փասկանչ անելը, հրսանէքը մին տնաքանդոթուն ա.
մին ըխճրկատէր եա մին տղատէր վէր վեց օխտը հեարուր
մանէթ պարտքի տակ չընկնի, բեաս նրա հրսանէքը հարամ
ա, իսկի հրսանընքու հեսաբի չի: Ասի խէ. իրեք օր լհա մին

ղօշուան հնգեր հրբլանու հաց պեղմա տայ, վէր բէքէֆ չի-
նին՝ անէճքը թախին, եա տնաղ անին, վէր Եիլդիշլորանց
հրսանէքը Փիրփետ Ղեափուն հրսանըան պակաս ար: Փըսին
վէր վէսկի թոխկայ, եա վէսկի սհաթի չինի, հոնց կինի, թէ
կուզ լհա պընըցնիլն էլ գիտըմ չինի. ըխճրկանը սկեալորը,
տաքիրներին, պատրունին, պելուն, եա հինչ գիտամ՝ խմը-
հեալա իւրան ըխճրկան փայ ու պեթինքն էլ ալհեաղա, վէր
սկէսուրը շիւտ-շիւտ իրեսաւը չի կեայ ու խալիսը ասի՝ բեա-
րաքեալլայ, լեաւ հրսանէք տուաւ Եիլդիշլորանց Միրզաջանը.
ամմա գիտըմ չըն թա լոխ էլ պարտքովի ա իլալ ու խեղճին
տօնը կլխին քանդուալ ա ու դրա մանին եա իւրան կնէգն
ա իլալ եա զէմբուչը:

4.

Ես ասալ չըմ, իսկի ասիլ էլ չըմ աբաղուլա, թա Ղա-
լին սովդաքեարնէն իւրանց դեազգեահին անըմը կոտորալ ըն,
ճախողը շտացալ ա քանց առնողը. չկամութիւնը, մին մինու
վննատակ քանդելը, ափաշկարայ փոշ օտելը, սոտը, զորթը իւ-
րիւր խառնած միւշտարոցը պլտկելը, նիսիա առնելը, նիսիա
ճախելը արիւն ու մարմին ա տեռալ. մին նազդեանայ հալալ
առուտուր անաղ թա վէր կայ՝ մենակ Աբրուամանց ապտեկիա-
նան ա, վէր իրեք գինը երայ տիրած Նադիր-Նահին գեօլ-
րան մնացած տղարանք ա ճախս անըմ, մին էլ մեր կլուքին
չլէննէն, վէր նազդի կարտի ըն տամ ու մին բշերըմը Մալար
Փօմիչի (Թուամուն տղայ Մարքարին) փողերը մննըմ ըն Իւան
Բողղանիչի (Ըստուծուրին տղայ Ուհանին) ջուբը, էքոր Իւան
Բուղղանիչին ջուբան մննըմ Արտեօմ Կասպիչի (Քեսաուն
տղայ Արթիւնին), ընտեգան էլ տիւս կեամ հզեր ճակ ու
ճուկ մննըմ ու մին էրկու շեփթան ետը լօխ էլ տեառը-տեար-

տակ տօն ընկած ըն ինքմ, եա պարտք բրած նոր մինա կար-
տին եախան փռնած:

5.

Ես ասալ չրմ, ախր կլխիս ձի ա քացի տուալ վէր ա-
սիմ: մեր պօլիցխանին պարտքն ա, վէր քիւչաներին, ըզբը-
հարերին ստակած շոնը, կատուն, հաւր-ճաւը, գերթը-գիբիւր
հաքիլ տէն ածել տայ, վէր կենայ վէչ տեղնուտեղը վետի
շնաւետը քցի, մարթու սէրտ վէր բերի:

Ա. խ, խօլերայ, թա մին նի կրմննես Գաբաղներին ճորաւը
եա թուրքերին մեահրոցաւը, կրտեսնաս հօւնց կրակ կտրած
իրեք օրըմը սաղ թմրզած կինի ու ամեն մարթ էլ իւրան
պենը ճնանչրմ: Գէ եկ էլի, անջախ քինըմ ըս՝ հշտեղ մին
թեամիւղ շհար կայ, հշտեղ մին պեն հսկացող ժըղովուրթ
կայ, ընտեղ պիւն տինըմ: եկ, բալամ, եկ, չրու կեսս վէչ,
վէչ Ղալըցէք ըն թեամիւղովիւնին դադրը գիղայու, վէչ
մեր դուխտրնէն ըն իւրանց սեարփան կուրցնելու մհար վրը-
հասու ինելու, վէչ էլ պօլիցխանան ա իւրան պարտքը կրտրելու:

6.

Ես ասալ չրմ, ախր հինչ պեն ծնիմ վէր ասիմ, թա
մրզանըմ քշերը խաթրու մհար հինգ ճօխտ փանար ըն վա-
ուրմ, էն էլ հշտեղ մին մեծ տօն կայ, ընդրա ըուսչին. աւ-
մա հղեր ծախրծու քիւչայ կայ, վէր մարդ օր ցերեկաւ էլ
փախըմ ա թա նի մննի (չիւն եա վէննը կրկտորի, եա ծեուքը,
եա կիլօխը, եա ջմնչքն ու կալօշը կրմնայ ցխըմը, եա ինքը
չրմի նի կրնկնի մին գեօրու մէջ, էլ իրեք սհաթ կարալ չի
թա մէջան տիւս կեայ, հեալա էն զրաղ կենայ վէր տասը
տեղ վէննը նի կրպրծնի պատերին տակին նիզամըմը շարուած
փափուկ-փափուկ պեններին մէչ ու մին շափաթ շնաւետը

ծեուք չի քաշիլ իւրան անա), տարաւ լիւսու իրես չըն տես-
նալ: Ա. խ տեսնաս հիւր խելք ա կտրելու, վէր Ասծու սիրին
զարանլըխ քշերներին մին նութը ճրագ տինի իտի տըղերըմը,
վէր պատառ ծիւպիւ-ծիւպիւի անի, համ մարդ սրտըվա-
նուի ընտեղէքաւ քինա՝ էտ խաթէնան ըզատուի, համ էլ
կիւղերին աչքը տափը տեսնայ, վէր շելակնին մղայիթ տօն
տանին:

7.

Ես ասալ չրմ՝ իսկի ասելու էլ մին զատ չի, վէր մեր ժա-
մերին զեանգակնին իւրիւգիւն ըուսուտ նհախ տեղան ըն
կուտրատըմ, մին ղօլան ժմհարներին ջափայ տամ, մին ղօ-
լան էլ ժըղովուրթին քնրհարամ անըմ: էն վաղ ար, վէր
տան պառաւ կնէգը եա մարթը խօխայ, ըրախայ աուսը քը-
ցած ձիւն ձմեռնն էլ ժամ կըքինար, աղօթք կանար, մում
կըվաւար, պղարագ անել կըտար, ժըմըրարին հանդերձը խու-
խոց երայ թափ տալ կըտար, տարին մին էրկու հետ ժամ
կընին, ըզբատու նի մնրցածու փայ ու պեժին կըտին. մհէգ
այամը հանց փիսացալ ա, վէր շիթըմէչի ժամ քինալը կըտ-
րուալ ա հերիք չի, Ասծու կիրակին էլ ըն մուռացալ, հեալա
դէնը կենայ պաս օտելը, տրտէրին հախկը կտրելը, մեուալ
թղելու մհար ջանայ թակելը, ես հինչ գիղամ՝ հղեր ու մին
պեներ, վէր հմանչըմ ըմ թա ասիմ. մախլաս, հիւքի-հաւատ
Ղարաբաղան տասը տարի ա վէր քոչալ ա շնըբտան ու
էն օրան դէսն ա խէր բեարաքեաթն էլ եր ա կացալ:

8.

Ես ասալ չրմ՝ ախր հինչ նամուս ա վէր ասիմ, Հայ-քրիս-
տոնան թողած իւրան 1850 տարուան եկեղեցին, էն օխտը
սուրբ խորհուրդնէն, վէր Քրիստոս ինքը պատուիրից պահել,

էն սուրբ հասար, վերի մհար քանիքանի առաքեալնէ նհր-
տրկուեցին, քանի կուտանք, սուրբեր, արդար անմեղ մարդիկ
կուտրուեցին՝ վերը վերըմ, վերը կրակըմ, վերը սրի, թրի ուր-
խի, ու պհեցին-պհպընեցին չրու սոր հսցըրին, մհէգ մին
փարայ մարդկանց խելքաւ փիս ա տիւս եկալ ու իւքանց մը-
հար Միրգաջանին չորս պատերը եկեղեցի ըն շինալ անտէրտէր
պղարագ անըմ, անմեռուն խօխայ մկրտըմ, անօրհնանք փը-
սակ անըմ, անխաչ անխաչվառ, անպղտրագ մեռալ թաղըմ:

Մինը հրցնող ինի, աղա հարամզագենի, ձեր պրպական
հատան հինչ փիտթուն ըք տեսալ, եա իսկի հսկանըմ ըք
հաւատը հինչ զաղ ա, վեր քեցալ ըք Լիւտերին փէշկին տա-
կը մտալ. ախը Լիւտերը հօր, Շօշվայ Ղալան հօր, եա մեղ
հինչ այրֆվերաջաք ծնինք Լիւտերին նհէտ: Շատ էլ տօինք
նա լեաւ մարթ ա իլալ՝ Լէմօին ժրղոյութըմ էն մեղքը ծա-
խող, մարթու հիւքի փչացնող Հոււմայ պապին ձեռքան ը-
զատու ա, մեղ հինչ. մեր Լուսաւերիչը, ծառայ եմ ընդրա
սուրբ շորութիւնին, եա Գրիգորիս հայրապետը, եա Մեծն
Ներսէսը, եա Սահակ ու Մեսրոպ թարգմանիչնէն, եա Ներ-
սէս Շնորհալին ու Գրիգոր Նարեկացին էտ անվեղար Լիւտե-
րան պակաս ըն իլալ: Ա՛ ձեր տօնը չքանդուի, առաջին Քը-
րիստոնայ ազգը Հայը ինի, Քրիստոս իւրան անձեռագործ
պատկերը Հային զարկած ինի, օրիշ տեղ մին, Հային հինգ
ըռաքեալ քրոզած, Քրիստոսի պատուիրանքնէն սլրցրած, սոր
սաղ աշխարքը մեր հատին, մեր ժամին, արարողութիւնին
ու ծէսերին երայ մաթ մնացած ինի, տիւք իրեանէտ շու-
քը տուալ ձեր պրպական հատան, ձեր տօն իլալիւմ քցալ՝
մօրը խոխան պրթենալ, ախճիկը մօրան, հեարը վերթան
ու գեօվամիշ ինըմ, թա մունք խալիս Քրիստոնայ ընք, մունք
Լիւտերական ընք: Չէ, ա՛ մուշորուած հայեր, էտ վէչ Քրիս-
տոնէութիւն ա, վէչ էլ Լիւտրականութիւն, ըտեղ մին օրիշ
հաշիւ կայ, էտ էլ ձեր ջուքան հրցրէք:

9.

Ես ասալ չըմ, Աստուած վէչ անի վեր ասիւմ, թա անգոր-
ծութիւնը, բօշքողագ մանկեալը, Ղալըմը շատերին քցալ ա
մեղաց ախտին մէջ, շատերին էլ քցըմ ա. սոր շատ Գոհիլնէ
լօթութիւնի ըն տուալ իւրանց, շատ ըղքատ-ըղքուտ զինընէն
խմիչքի, պաժարնիք, ջուքգիրնէ, զուամրբաղնէ հային, թուր-
քին մէչին անհետաք շտացալ ա ու մինը կայ վէչ, վեր մին
քաղցը խօսքաւ ընդրանց բէյնըմը նստընի, վեր էտ ըրար-
մունքը մարթու լայեղ պեն չի ու դիւզ յղէ նշանց տայ:

Նեալա ասըմ էլ ըն թա մրգանըմ ժրղոյութին ցաւը,
դեարդը գիտող համիա մարդէք, պեն հսկացող Գոհիլնէ կան:
Հինչ օգուտ սանդուխըմ քլլած խելքան եա հինչ կանիւմ էն
խելքը, ուսումը, գիտութիւնը, անիծուած փողը, վեր հրկաւէր
տեղը մէյղան չի տիւս կեալու, մին պենի փայղայ չի ինելու:

10.

Ես ասալ չըմ, ախը հինչ պեն ծնիւմ վեր ասիւմ, թա
Ղլրցէք ամեագ ըն քաշըմ ախճիկ մըծընըմ ու հեալը վէնը
տանըջորսըմը չտիրած, ըշխարքին խելին ու շառին բէյխա-
բար, հարամ ըպրանքու նման եր ըն ծնըմ մին անտես-ան-
ձանանչ տղու տամ, խեղճ խուխին ումբըր սեւ անըմ:

Ես ասալ չըմ, թա էտ Գոհիլ-Գուան ըխճկորանց հեարիւ-
րան մինն էլ իւրան կամքաւ չի մարթի քինըմ, սաղ մօրը,
հօրը, տատին, պապին, եա պելուն հրմանաւն ա ու էտ պե-
ները դիւզընող, մէչի մարթը եա խմորհունցողն ա, եա
տատմարը, եա հացթոխը, եա դեալլաքը:

11.

Մհէգ էս պեները վէր ետ ատալ չըմ՝ իմ ազիզ Արցէք
ինձ օգըմ ըն քարկործ անին, բա վէր ըսի, հաստաս թոփու
որիս տինին ինձ էն դիւնեան քուչըցին:

Մին էլ ախր ինձանըմ հինչ մեղ կայ, ա՛ ձեզ մատաղ, սազ
էն էշու կաշուա շինած ու լեաւ դայիմ կրկատած տմբան ա
խաբար տամ: հու վէր նղանըմ ա, թող ընդրանայ նղանայ,
քշեր ցիրեկ էն զղար դուգընըմ ա, վէր իմ զեահան էլ ա
տանըմ, օգըմ ըմ եր կենամ կացնաւ կուտրատիմ, մին էլ ա-
սըմ ըմ, ախտու ա, հու ա գիտըմ՝ բեալ քեամ ետնան լեա-
լեաւ պեներ էլ խբար կրտայ. ձեղ ըրէնակ, թա էս քան վէր կիւ-
զօթուն, աօն կտրել ա ինըմ, էտ վէր Աւգուլ Քեարիմին ձեռ-
քան ա ինըմ, եա հշտեղ ա փրտակըմ: եա Պեաին, Մաթին
վէր քշեր ցիրեկ քնէնքըն անըմ Բագուն տօնը կլխին քանդին
մէչին հինչ մեահաբ կայ. եա հինչ սեւ կատու ա ընցալ Զա-
քիւնան Թաթին արաղաւր վէր էրկու տարի ա խուա բն.
եա առի լեաւ-լեան ասիմ: Դունըմարզանց Կեափին իւրան ըխ-
ճըկան սէրտը խէ ա կտորըմ Աւգալ Թիւնուն տամ, քանի վէր
օշը մէտըր Ծկոռանց Միրզին երայ ա. եա Վանին, Բաբան,
Թաթին վէր ըստեղան ընտեղան փողեր ըն պլոկալ պուկընէն
լցալ, ընտրանց սիրեկը բա հիբ պեղմա պենուայ ու խտի մին
խիլայ անքննելի պեներ, վէր վերջը պեղմա քննուին ու տըմբ-
լաս տիւս կեան, թա վէր իմ քոռ բախտան մոկները ծկծկո-
տին վէչ:

12.

էս բարեւակիրը վերջըրալի վէր տմբիս բիրզան թխե-
ցի գմբգմբոցը նի ընկաւ Ալան, թա կնդատորին ընդըմնե-
րան մինը վէր իւրան օրըմը իսկի ըուրջվաթ չօտել, պրանան

փիս խօսք չի հանել, մարթու երայ շառեր չասել, էս օխտին-
ջի անքամն ա վէր վասն հարազատ ծառայութեան վիրեական
տալաւ յղէ ըն քցըմ վէր քինա տանը դինջանայ, ամմա ազէ-
րը ազլի չի, ասըմ ա, օխտըմ ըրալ չըրու մահս ազգին ծառայեմ
ու խնդիրքագործ ա ինըմ վէր օթինջի անքամն էլ անդամ
մննի ու պակաս տեղերը դիւլըցնի:

13.

Տմբիս մին էլ թխեցի ու սեասը չըրու էջմիածին քինայ,
թա Արըբաղըմը էլ տէրտէր չի մնացալ, բերիլ ըն տուալ Ալան,
վէր 1868 թիւան տէսնա հինչքան «Արարատ» անըմաւ կա-
զէթ ա տիւս եկալ՝ եա ընդրանց կբիտանցէքը պիրեն կնդըս-
տորը, եա տարին իրեք մանէթ հաշուած փողերը տան, եա
չէ տրտրթիւնա տիւս կեան: Խեղճ դէրերն էլ խրթըմը հա-
ւատ ըն անըմ ճաքճաքը կեամ, թա փողերը տուալ ընք գուրծը-
կալին, ամմա կբիտանցօցը վէրը կորալ ա, վէրըմը բոնոթի,
աղ, տաքտեղ եա խինա ա իլալ կապած խարաբըն իլալ, վէրն
էլ դիրակէնն ա դէրին դաւուխան հանալ նութընըրաքը նի
կցրալ էրիլալ ա մոխիր կտրալ, մախլաս մին-մին խաչաւ թա-
ղուալ ըն: Մին քանէ զօրբայ դէրեր էլ՝ ասըմ ըն, ոչ փողն
տուալ, ոչ կբիտանցի տուացալ, հեալա իւրանց հմբեարան
հաբաճն էլ տուալ ըն ցորնու, կեարու, կորկու՝ սոլ տունին
իւրանց խօխէքը պահալ:

Թա հունց կրվերչանայ էս պենը, հեալա անքննելի ա,
մենակ քննուած վերչացած ա, վէր մրզանըմ օղտերը թողած
մուծակին փաչին երայ ըն դաւի տամ:

Խեղճ պիծի դէրեր, խեղճ պիծի դէրեր, հեալա Արը-
բատին ծալը պեցած կրթեցած չինիք՝ մհէգ իտի խարժու տաք
քցին ձեզ, բա վէր կրթիք, հու ա գիտըմ տարին իրեք չէ,
իրեք հետ իրեք մանէթ ինք օնին:

Ե՛հ, պարօն կազէթ կիրող, պեներ շատ կայ մը-
զանքմ տմբլիս թխելի, ամմա հինչ կանիս հաւան ցուրտալ
ա կաշին տմկալ, սեասը լեաւ չի եր ինքմ: Թա քեզ Գաֆայ
չինի, ինձ մհար մին ուուու բլրբան դարկի թեաղեայ տոնին
դուռընիմ, մին խլայ խէր ու շառ քեզ հսցնիմ: մհէգ մնաս
պարուլ, քինքմ ըմ թովիսանան տեսնամ իսկի հրսննքու կանչող
կայ, լախ մաղբուն ընք էս էրկու ամսին ու մեր տնայուն
էլ խուսըցընլըմ չի, վէր ճարքմ ճար ինի է, տմբլիս կաշին
զինար-զինար կրկտորի վէր էլ թխիմ վէչ սեասը եր անիմ
ու քինամ օրիշ վեշակ մննիմ:

Քու խոնար ծառայ

Տ մ բ լ ա ջ ի Խ ա ջ ա ն:

Դ. ԲԱՐԵՒԱԿԻՐ.

Գերամեծար սհաս կազէթ կիրող.

Նախ եւ առաջ շատ ու շատ շնուրհակալ ըմ քրզանա, վէր
ջախայ ըս քաշալ թեաղայ տոնին ինձ մհար մին ուուու բլրբան
դարկալ, ամմա բլրբան ա հա, քու արեւն ըմ ասքմ հեալա կու-
պընէս նի չեկած՝ գիւգիւծուր եր անքմ, հշտեղան ասիս ծէն
ա տամ, հշտեղան ասիս թլրգրամու նման խբրնէ ա պիրքմ
մին դաղաղըմը հսցընքմ: Էտ հեալա վէչինչ, բլրբանիս մին
լեաութիւնն էլ ընդրանքմ ա, վէր ըրարած ըշխարքըմը հինչ
վէր մարթու կլիաւ անց ա կաղալ եա ընցնելու ա, մին-մին
հմբարքմ ա տինքմ ըուաչին: Աորթ ա ըստրանաւ. Տէր Բալին
տղին, մին փարայ փալու, ծինգարու, կոռնըչափողու, կեա-
րի քցողու հաց կրկտրի, ամմա դէ ես էլ խեղճ ըմ, օխտը
ախճիկ ծնիմ տօն ըրած, օխտը ըխճկան ուէին էլ մին տմբլաւ
ա պահվում, մհէգ վէր էլ ինձ հրսննքու ջրն կանքմ, իմ ճար

ու իլածն էլ բլրբանս ա, կրդուռընիմ Ալին կնանէքը կլխիս
հաքիմ բախտըներին եշիմ, ճկրտներին կիրած սեւը սիպ-
տակը թրքմանիմ, ըտրանաւ համլուր-մարթի կրտեռնամ Աա-
լին մէչին, համ էլ վէր մին-մին մանէթ բլրբն հախի ինք
օնիմ, տարուայ վերօին խարօը խալիս մին հզեր մանէթ էլ ա
կըմնայ ու մին իրեք տոնըմը համ մրթըմէչի պատիւըս կը
պցրանայ, համ խօսքս տեղ կանցնի. էն վախտը Իամքաշ Ա-
կունին տղայ տմբլայի Խաչանը՝ Խրիստափոր Եակուլիչ կրտեռ-
նայ, հու ա գիղքմ բեալքեամ մին օր էլ սիպտակ շարին
ուէխը տան կիպիտատ ճօկին ու մին քանէ անվէսկէու թի-
քայ կոլ տամ՝ առէ լհա պեներս լեաւ քինայ:

1.

Պարուն կազէթ կիրող, յունվարի մինին սուրբ ծագին
բլրբանիս թխեցի, մին սեաս եր իլաւ, սաղ աշխարն էլ իմա-
ցաւ, վէր թեաղայ տարին մոնթուռը կախ, մին դրգեանակ
ձեռքին Աալին ներքի գըրլըզաւը նի մտաւ ձիւնըթաթախ,
տրխընէն ճկծկոտ, մութըլէնէ փափախը ջրու անգուճնին
կրխը նի կոխած, չոխան ըփուքմ-ափուքմ, մին սեւ սմբետան
մէչքին, մին խուրջին՝ խէրաւ, շառաւ, բմբսանքաւ լիգը պե-
րաւ Թովիսանըմը թողից, ինքը սուսուփուս երի գըրվաղաւը
տիւս եկաւ դիբի սարին էն ղօլը (վախըմըմ էշու կաշուի ինի
քինքմ էտ անիծածը ու կաշին թնգըցնի): Թեաղայ տոնին
կեալին երայ իմ բլրբանը առաջ ու առաջ շնհաւեր ա անքմ
քու թեաղայ տարին, պարուն կազէթ կիրող, վէր իրեք տարի
ա ջախայ ըս քաշքմ մեր ցաւերը մեզ հսկըցնքմ, մեր եարին
մհլամ աինքմ, ըշխարքիս խէրը, շառը մեզ իմըցընքմ. Աստուծ
քեզ էրգան ումբրաւ պահի, սաղ Գանաւ, բլրբանիս օրհնու-
թիւնն էլ քու ղլամատ անպակաս անի, վէր շատ տարի
էտ ղլամատ խելք, շնորք եօր օնի մեր խեղճ ժը-

զովուրթը, քարը կիլօխ թա սաղ տարին կազէթտ անփող կրկարթին, մին էրկու հզեր մանէթ պարտքու տակ կընկնիս ու կզէթիա փողերը ըստիւր ընտիւր ջուբուս թոխս կրկեայ:

2.

Բլրբանս շնհաւեր ա անըմ գէրերին, գուրծըկըններին ու անդամներին թեազայ տարին ու պղատըմ, վէր Աստուծ ընդրանց սէրտը ուսհմ քցի, վէր ջրու մին եզը պատառ չի կեայ մէջ տեղ հասը չհաս չանին, չհասը հաս ու հրաման տան Խանքեանտի, Ծկուռի եա Մուշկասպատ փսակ անին:

3.

Բլրբանս շնհաւեր ա անըմ վրժուհոնոցն ու վրժըպեաններին թեազայ տարին ու Լստուծանայ ընդրանց մհար խելք, շնորք, քաղաքավարութիւն խնդրըմ, վէր պատառ էլ իւրանը մեր խուխոցը տան:

4.

Շնհաւեր ա անըմ գոխտուրներին, դալլաքներին, սովդաքեարներին ու զարգեարներին թեազայ տարին ու ընդրանց առուտուրին բեարաքեաթ, ջանըներին յուաթ խնդրըմ, վէր շատ տարի իւրանց փեշակը մեր շհարըմը պնըզընին: Մեր բլրբանը գ ո ի տ ու ւ ր ն ե ր ա ն խնդրըմ ա, վէր ջրու իրեք մանէթ վիզիտի փող չառնին վէնընէն տանան տիւս չտինին, թէկուզ լհա հինգ սհաթաւ նչաղին աչքը ճնրպարին ինի մին քթող հիւնը թթվու շորվի երայ ու խուխոցը վէր թուրէնն ածիս մկլաւէտ չիկեայ նստըներան: Կ ա լ լ ա ք ն ե ր ա ն խնդրըմ ա, վէր իւրանց նեշտարը, ծիլին ու սիւլիւկը ան-

պակաս անին մանաւանդ մին քանէ պորտը եղըկալած մարդկանց անա, վէր կերածնէն կարըմ ջըն լեռու մարսին: Ս ո վ դ ա ք ե ա ր ն ե ր ա ն խնդրըմ ա, վէր օրըներըմը դորթ չխօսին, կեազըմը իւիլ չկարին, թէշնա չէ վայը եկալ ա իւրանց տարալ, իրիարը ծոռ կըլմնի: Զ ա ր գ ե ա ր ն ե ր ա ն էլ խնդրըմ ա, վէր պնընձին նհետ վէսկի չխտոնին, վէսկոււն զատըը մեր ժըղովուրթը հեալա հսկանըմ չի:

5.

Շնհաւեր ա անըմ գաւթարխանոցը միրզոյը թեազայ տարին ու խնդրըմ, վէր միայն Տէրը ընդրանց աչքը կուշտըցնի, թա չէ խնդիրքակործ խտողներին ջուբներըմը էլ շահի քիտի չի մնացալ, լոխ տիւս ըն տուալ:

6.

Շնհաւեր ա անըմ աղիգ-մաղիղ կնանոց ու ըխճըկորանց թեազայ տարին ու խնդրըմ վէր մին ատաժ տիւրնիւրին երայ էրկու ատաժ էլ իւիլցնին, քարը կիլօխ թա բախկալ Ծատուրը մին օրան մին օր էլ նա մինին կըճըքըհարի ու իւրան պանրին թաբսիւր կըպիրի վէր միւհտայ պեռնի միւշտարուն հօցնի:

7.

Շնհաւեր ա անըմ ազափ աղոց ու նշընըծացու ըխճըկորանց թեազայ տարին ու ընդրանց սրտին դիլակը միայն Տէրան խնդրըմ, վէր անտես-անճանանչ նշանուին, անտես-անճանանչ փսակուին:

8.

Ննչաւեր ա անրմ հարսին ձեռքին եսիր մնացած սկես-
փորը ու սկեսափորը ձեռքին եսիր մնացած հարսին թեազայ
տարին ու էրկուքանուց էլ Սատուծանայ խնդրում, վէր մին
մինու մհար իրըսըհան հիլի ինին, տըրըհան ծիլի, վէր հըն-
գեր հրեան գիւյսիշ չինի փիս ըրէնակ եօր ծնի:

9.

Մախլաս, շնչաւեր ա անրմ տակին մնացած ճարգածուր-
դին թեազայ տարին ու Սատուծանայ խնդրում, վէր ընդրանք
էլ մին օրան մին օր իւրանց դիլակին հասնին. թա պառաւ
ախճիկ ա տօն ընկած՝ մին պառաւ փրսուքինայ, տանը դարդ
ու բալան նհետը տանի, թա քլթառած փասցու ա՝ մին ըր-
բըլերի կնգայ ուստ պիրի, թա օխտը տարի գիւքանըմը
մէչքը հոռ ըրած նստած փրքաշիգ ա՝ պարով եարմուկայ
քինայ, խրիգ անի, նաղդ առնի, նիսիա ծախի, թա չէ ինձ
նման օխտը ըխճըկասէր տմբլւչի ա, լեաւ կանի անխօս մին
ճօխտ արկանք քցի բողազը պիդի մաղաւուղին գեօլը երըմիշ
ինի, ընդրա մհար թեազայ տարի չի կայ:

10.

Բլըբանիս թխեցի մին սեաս եր ելաւ, թա Ղէանց Գէն
կիպիտատ ճոկուից. գեալուստը պարի:

Ասըմ ըն ժըղովուրթը էտ օրը ուզեցալ ա մին ծահիլ
ուստում առած տղի ճոկի, ամմա մին քանէ համբայ մարդէք
ուզի չըն կացալ, առալ ըն՝ ուստում առած ջահիլ կիպիտատին
փորը հինչ կըմննի, վէր ընդրան ճոկինք, մեզ արշինուկէս
տիւս պրծած փորաւ կիպիտատ ա հրկաւեր, վէր սօր մէչը

քիւֆթայ ա, դօլմայ ա, խոզի կուրկուա ա, տուարու օթ
զինգ ա, եղաւ լիգը պուլիգ ա, թընըքքասակ ա, ըքը համբիւր ա,
հինչ ասիս մէչը կարի տղվարի, իսկի այնըմն էլ քցի վէչ:
Մախլաս, ժըղովուրթը սուսա կացալ, չիւն տեալա ղորթ էտ
պեները ուսում ըռածին փորըմը տղվարիլ չի, փորն էլ հե-
լա կըպըտառի:

11.

Յունվարի վեցին բլըբանիս թխեցի գիւլգիւլօնը եր իլաւ
թա Ղալին լուսաւերուած շկօլին ըխճըկորանցը մհար ծոզար-
դար ըն սարքալ. հայ, թորք, ուսա, բախկալ, դասաք, ուստայ
ու շակերտ լօթ էլ տեղվատեղ եկալ ըն՝ վէր չմըչքաւ, վէրը
ղաման քմական կախ, վէրը բաշլըղը ուսերին ու զալըմը պա-
պիրոս քշելաւ խոփոց արալըղը մտած թմաշայ ըն անրմ. մին
էրկու պառաւ կնանէք պուճախըմը քեօհնայ գեարգեր ըն
պեց ըրալ, ազիգ-մազիգ ըխճըկէրքն էլ եղօնիկու նման տուր-
ղած շարուալ ըն, մին եանին էլ շկօլին խօխէքն ըն նստոտալ
ու պատան կախ ծոզարդարին գառվարաղ խնձորին, տան-
ձին, ճղպրին երայ աչք ըն ածըմ ու մտքըներըմը կուրկուա
քցըմ, թա ես էս եօր կօնիմ եա էն: Չալին կողքի էրկու ու-
թախըմը մին քանէ պատուական մարդէք բարեգործական
նպատակաւ շտօս ըն խաղ անրմ, մին բյաբան ութթախըմ էլ
ասպաժխանայ ու շիրախանայ ըն պեց ըրալ ըստիւր ընդիւր
զօռաւ քաշըմ տանըմ մին հաւու անգէմը տամ, իրեք մա-
նէթ ինք ծնըմ, մին ուիւմ կայ երեք կըպըկանուց արաղ խմը-
ցնըմ, հինգ մանէթ գախը քցըմ:

Սհաթի օթին պուլկովի մուզիկը փչըմա, ըէալնի շկօլին
մունթերը ճլոնկ ըն ինըմ, «պողվոյտէ, բարիշնա, սվամի տան-
ցաւատ» ասըմ. բարիշնան էլ մէկալ օրուայ քար կոտորոզ
Թիւնուն ախճիկը, եա Չաղալ Պետուն թոռը, սըլգրան լոք

ա առամ, կաղնրմ ու խաէտ-խտէտ պար ըն կեամ:

Պօպկօվի մուգիլը պրծընրմ ա. մ՛հէգ էլ թառն ու քեա-
մանչան ա կցրմ ու ծեռքին կլիսին ընելաւ մեծերն ըն պար
կեամ. թուրքերին պրանին ճիւրը քինրմ ա (ախր խտի թմա-
շայ ումբըններըն հշտեղ ըն տեսալ): վէրը չրթմայ ա թխրմ,
վէրը տաշի, վէրը վէնները տախր թակրմ՝ «օյնա, բաջի, օյնա-
ա Հեաշիմ, ամմա նեա թեամաշայ գր, սեան էօլասան աղամ
հէչ ինջինմագ բիր բելա երդան. բունա բախ, բունա, մարա-
լա օխշըլիր, նա խօշ սըփաթ դր, այ գուրբամն օլրմ հա. վուր,
Հաշիմ, վուր օյնասըն, տաշ, տաշի, հայ-հարայ...»:

Սհաթի իննին պարը թիւնդ-վրմ ա, շօնը տեարը կուրցը-
նրմ: վրթուհանէքը՝ խօխէքը անդար թողած, ծուզարգարին շու-
քըմը ջահի-ջհիւու նհեա մրչըմաննի ըն տամ: բախկալ Շա-
տուրը չուխան քիլաւանդ բրած մին պուճախըմ բուրդի ա
կտորմ իւրան մ՛հար կմպանի սարքըմ, մրչամարթն էլ թքացած
փուրդոնի ա կտորմ ու վըննըներին թրըմիոցան պտը քշը-
պեցուր անրմ ու Ղալին խախը, չրու պուրուօտէնքն էլ
նստած տղընէն հինչ հաւա տախ պար ըն կեամ:

Սհաթի տաստին լատարխա ըն քցրմ շկօլին ըխճըկտրանցը
մին-մին թրվանդ, թոր, եա տրուտիուտիու պըթէնրմ, վէր
ըրըսնէն պարզ տօն քինան. էա դեարըմը մին թոփ ա տրա-
քըմ ու իլիքտրական լիւսին շփաղըմը էրկու թորք մին մինու
բուղազա ըն կէնրմ ու մին խնճորու երայ կուել տամ: «աղա,
վուրմա, թխի», ստեղան ընտեղան սեասերը պըցրանրմ ա: Աս-
տուճ օղըմ ա խանչալ չի տիւրիւր կեամ, մին թեահրաւ պը-
թէնրմ ըն ուստ անրմ:

Խօխէքը տօնըն քինրմ՝ վէրը կալօշաւ, վէրը անկալօշ,
վէրը անպալտօ, վէրը անգեադայ ու անճիրադ ու ծուզար-
գարը մընրմ ա մըծերին: Չրու սհաթի իրեքը՝ աթըմ
ըն, ծուզարգարք ըն տուալ, իրեքան ետը շամպանցկի կոտ-
րալ լիւսաւերութեան կենացը խմալ, վէր խտի շիւտ ա եկալ

մեր Ղալըմը պիւն տիրալ, ճտեր ըրալ:

Պարուն կազէթ կիրող, եարաբ էս ծուզարգարան ձեր շհա-
րըմն էլ ինրմ ա, թա մենակ մեր Ղալըմն ա, եա ձրզանրմ էլ
կարտոժնիգնէ, խանչալալէր, բախկալ, չախկալ՝ խուխոց նհեա
ծուզարգարի ըն տամ, եա մարերը իւրանց խուխոցը անտար ըն-
գէրու թողըմըն տանան տիւս կեան մին էլ կես քշերըմը կեան,
հեալը հեալբաթ ջողաբա աօ. ստեղ տարմըն հու վէր ծուզարգար
չի քինայ, բեաա նա լուսաւեր չի, դորթ ա: Թա վէր դորթ ինի,
ասի՝ օրը իրեք ծուզարգար սարքիմ, բեալքեամ Ղալան առէ
լիւսաւերուի, հեալա պատառ էլ գէնը անց կենայ: Ամմա իմ
կարճ խելքաւը թա վէր Ղըրցէք իւրանց նամուսն ու դէյրաթը
չպահին, իւրանց աբուուը չորը չքցին, իւրանց խէրն ու շառը
չճնանչին, հինչքան էլ վէր ծուզարգար քքինան, հինչքան էլ վէր
մօղնի չտիւրիւր կեան, հինչքան էլ վէր մայեա-տվայեա անե-
լաւ մին-մինու աքքեր չկապին, էլհա մնալու ըն էն վաղէ կիւշը
էն վաղէ փրթիւշը:

12.

Ղըրցուց ախճիկ ճուկելը կնանոց պարլա-
մեհտըմ:

(Կնանէքը գօշակին երայ ծըրպատակ նստած, մին-մին
տէրոգորմեա ձեռքըներին):

Հուուին. Ախճի, գիւրմըք հինչ կայ, իմ տեաքոր տղին
մ՛հար պարեկենդանին օղըմ ինք աղճիկ օղինք, ամմա ինքը վէզը
տակաւը չար տամ, ասըմար ես փարկուելու չըմ, Ղալըմը իմ բաք
ախճիկ չիկայ. մախլաս, կլիա հանրմ ար, էն օրը քուրը վէր
կիր չի անիլ տուալ Տէր Բալին տղին, մ՛հէգ ինքն ա կճացալ.
կենրմ ա կենրմ, թա տիւք մին ախճիկ ճրեցէք, ես հինչ վէր
ինի դաբուլըմ, մ՛հէգ Պրտանին դոհում-զարգաշն էլ տիւք
ըք: հիւր ըխճկայ հաւան ըք, ըսեցէք, վէննը կապինք. թա
ինձ կըհրցնիք՝ ես Ծկուուոնց ախճկան ըմ հաւան:

Ձ ա ու ի ն. Վճւյ ցաւս քաղի նա, օսերը լհա մալականու
օսեր ինի, իրըսկըհատը պընպէնուտ, աչքերը լհա տրաքած
շմբալութ, կիշըկիրողը նրան տանի. նա հինչ զատ ա վեր
Պրտանին մհար օզինք:

Վ ա ու ի ն. Ախճի, ասըմ ըն քէթն էլ կուռնոս ա:

Հ ու ու ի ն. Բա, կլխիս մատաղ ինի ըտրա ասողը, քէթը
լհա հանց ա շիմշատ քթոլ:

Թ ե ա զ ա ն. Ախճի, փսացուն ասըմ ա ընտրան օզել ջըմ:

Ա մ ե ն ք ը. (օնքնէն կիւտելաւ) Ետ օրիշ պեն ա:

Ձ ա ու ի ն. Ախճի, եկէք Կուտեմոտեմանց ախճիկն օզինք,
շատ թարիֆ ըն անըմ:

Հ ու ու ի ն. Բո, բո, բո, Աստուծ վէչ անի, բա լհա էն
բոյը կարճն ար մնացալ:

Թ ե ա ու ի ն. Ախճի, ընտրա շնորհքը կարուի, հանց ա լհա
բըլթանթրուշ:

Գ ի լ լ ի ն. Ախճի, ինէ իտ: քք ասըմ, էն ըխճկան իսկի
փոտ չօնի, խէյ ըք բախտին քացլ տամ. մէկալ օր իմ հեա-
րանց հացթոխը հանց թարիֆ ար անըմ, վէր ախպէր ունի
է, ես կուզի իմ ախպօր մհար:

Շ ու ու զ ի ն. Ախճի, լեաւ ա լեաւ, տիւ էլ խէ շատ ըս,
նրա չիւչիւտ իրեսը վէր քինի, վէր մին լաք կորեկ ածիս,
կըտանի:

Ա մ ե ն ք ը. Չիւչիւտ ա. փոյ ջէ, էտ էլ թողինք:

Ս ո լ թ ի ն. Ախճի, եկէք Խնճլոզանց ախճիկն օզինք. ա-
սարմ ըն շատ խոնար, ծեռքաջրաւ, ուաշիզ ախճիկ ա:

Թ ե ա ու ի . Վճւյ, վճւյ, քաշի մին ա. ախճիկը զորթ ա,
լեաւ ախճիկ ա, ամմա մօրը ցեղը փիւ ա:

Ա ն ա ն. Վճւյ ընտրանց խնճլոզն էլ վէր քինի, էտ ար
պակաս. եանի ախճիկը հինչ մաթթան ա՝ լղաբ, հանց ա լհա
ալակուշկուշ ինի:

Ս ո ն ա ն. Էն իսկի իմ աստղն էլ չի վաւըմ, թողէք

մին ա. Թա ինճ կըհրցնիք, ծոճուկանց էն մարալ ախճիկը
կօզիք, քարը կիօխ, Թա պատառ քեասիք ըն:

Հ ու ու ի ն. Չէ, քմմատաղ, էն մեր սազ չի. ճպատը իւ-
րան քօլան կըկտրին, մոռնք քեասիքու ախճիկ ջընք օզել, հանց
վէր կեան մեր տօն վէր կօխին:

Շ ո ու զ ի ն. Ախճի 15 տարին ընցալ ա, քւթառալ, ընդ-
րան էլ հու թամահ կանի:

Վ ա ու ի ն. Վէչ էտ, վէչ էն. եկէք տկոռ Վանուց ախ-
ճիկն օզինք:

Թ ե ա զ ա ն. Մին թող ա, ընդրա պերանը վէր քինի,
օշախ կոլ կըտայ. օնքերը հաստ-հաստ, աչքերը լհա բիզաւ
ծկոտած, խզատակը բըթբըթոտ, խուսելուց պրանին փսլէնքը
թափըմ ա:

Ձ ա ու ի ն. Ախճի խէյ ըս հոքուտ մեղք անըմ, օրը ջըրու
իւրիւզիւնը էն ա ինըմ մեր տռանը, իսկի մին այիք չօնի:

Գ ի լ լ ի ն. Ել այիբը վէրը կինի, վէննան ջըրու կիօխ
այիք ա էլի. օզըմ ըս Ղալին մէչին մատխարայ տեռնանք, մեր
անըմին հինչ կըսապի:

Թ ե ա ու ի ն. Ախճի, եկէք փիրփեոտ Կեափունց ախճիկն
օզինք, ասըմ ըն բօլ պեթինք էլ օնի:

Հ ո ու ո ի ն. Չէ, քմմատաղ, ընդրան մոռնք կարել ջընք
պահինք. էրկու օրըմը էս տօնը իւրիւրոցաւ կըտայ, հօւնց վէր
իւրան մարը իւրիւրոցաւ տղաւ ընտիւր մնանէ տրաքըմ տօնը:

Վ ա ու ի ն. Թա վէր տան, շատ էլ ուզի կըկենաք:

Հ ո ո ո ի ն. Բա, ցաւս էլ քաղին ընդրանք, շատ մեծ
մարդ ըն, կլխիս ընդրանք մատաղ ինին, հեալա կեան վէննս
էլ պաչին:

Ձ ա ու ի ն. Ախպէր, եա վէչ խէրու կըխառնուիմ, վէչ
շառու:

Ս ո լ թ ի ն. Ես հինչ պեն օնիմ վէր մէչ տեղ փիսը-
մարթի տեռնամ:

Գիւլիին.. Հինչ պեն օնիմ կարմունջըմը, վէր պրտտուեմ եալինջըմը, ես էլ զրազ կրկենամ:

Ետնան պարլամենտին կնանոց տէր ողորմեան ըն ընկնում Ղալին սազ ըխճըկերքը ու տիւս կեամ մին-մին փոտ երայ տիրած, չրու վէր մթնում ա, չայը խմում ըն, ամեն մինը իւրան կանգիտատին եալլուխըմ քշկուած տօն ա տանում, վէր էն մին պարլամենտըմը էլ՛հա վէսկը ճրած մէյգան տիւս պիրի:

Թա փսացուն էտ պեներին խաբար ինի, եա ընդբանայ պարլամենտը հրցընում ինի, թա քու մէտքտ հինչ ա, սէրտդ հիւր ըխճկայ երայ ա, եա փլանքեասին ախճիկը էս արժանաւորութիւն օնի, խելքը, բնօթիւնը լեաւ ա, ուսում աւած ա, ես վէչ արժանանամ իմ օխտը ըխճկան անթառամ փսակին. Ղալին լօխ ըխճըկերք: էլ պարլամենտին մկրատաւն ըն ձիւլում, կարող կրկատողն էլ տատմարն ու հացթոխն ինում, խմորհունցին ու դեալլաքը:

Պարուն կազէթ կիրող, դէ էլ հինչ կիրիմ, մեր տնացէն քէ շատ պարով կանի, ցօրտ ա, լօխ էլ մրսըմըք:

Մնամ խոնար ծառայ

Տմբլաջի Խաջան:

Ե. ԲԱՐԵԻԱԿԻՐ.

Գերամեծար սհապ կազէթ կիրող.
Ղորթ ա Ղալլին մին փարայ մարթոց խտին նի ա կացալ վէր քու կազէթըմը իւրանց թանին թթոյ ըմ սասլ, շատ ըխճկերք ու կնանէք ինձանայ խուալալ ըն ու բեդամալ իլալ, վէր իւրանց թարիփլաման Ղալին զրլզան տիւս ա եկալ. հո՛ւ

ա գիտում բեալքեամ քու կիլոխն էլ դեանգ տեռաւ մեր բլբանին դուգուցան, ամմա հինչ կանիս եախ ա չում թափում, հու վէր եր ա կենում անգուճիս մէսն օարմ ա, թա բալբանիդ թիխ էս կիրի, էն կիրի, մեր կանտորը լաֆ զիւիւր ըն պերալ քինալ կեալան. կիրում ըս վայ ա, կիրում չրս էլ՛հա վայ ա. էլ մին ասող չի կայ թա Տմբլաջի Խաջանը քանի մին ցափ կեայ՝ Ղալին խէրն ու շառը կիրի, վէր ծովերը թանաք տեռնան երկիրն էլ թողթ էլ՛հա կիրելաւ պրծում չինիլ, թա իւրան օխտը ըխճկան դեարդը քաշի, վէր էն ա մին մինուհետ ա հսալ ըն (առի պիճինը էս խոտին վէնը քսանըմը կրտինի) փարկելու վիտընէն ա ու միւշտարի չի ճարվում վէր կլիսա ուղ անի: Բեալքամ մտկաւտ ընցնի թա Խաջանին ըխճկերքը հեալբաթ կիշը-կիրող զատեր ըն վէր տան ըն մնացալ չրու սօր. չէ՛, քու ազիլ արեւը, ըխճըկորցս մին այիբ չօնին, իւրանք լրտըն-լատան, վրննը ծրօքընէն պինդ լհա մին-մին ճրդոտուն, ուշիդ, խոնար, շեքաւ շուրբաւ, սիւրունատես, հանց սիւրունատես, վէր մին հետ տեսնողը հանց հայիլ մա՛յիլ կրկտրի երններան, վէր էլ օգել չի ումբրումը մին էլ սֆաթներին եշի, ամմա հինչ կանիս խեղճերին բախտը կապուալ ա, քարին ու կապին դէմ ընկալ:

1.

Խոտովանք մնայ մեր մէչ, պարուն կազէթ կիրող, պրբկենդանին մեր տնացէն շատ վրննը ծեռքին ընկաւ, տատմարի, խմորհունցու, հացթոխու ու պարլամենտին ջլէններին խալաթ վէղ առաւ վէր ըխճկորցս մին երկունին կուլը կապ անին կլիսա հանին, զատ չի տեռաւ. ասեցինք Ձգարթարին հեալբաթ Աստուծ ողորմած ա, ժամ կրտանինք հնգեր հրեանն երայ կրտեռնան մին թեահր կանինք:

Ձգարթարը եկաւ. լափ մթէն-մթէն խօխէքս հլքեցի

զրթրեցի տարի ժամ, ջարգին կղնըցրի, ընգուճներին ըսեցի վէր կեառնու նման պոքշկած կաղնին, իրեսներին շիւտ-շիւտ խչրկնքին, պոքշէն տի րիւր տան, վէր խալխը գիտայ թա աղօթք ըն անըմ, խըշկոտան վէչ եա քսիսան, հոհուան մըծատան ըխճըկորանցը նման, վէր իրեսներըմը աբուռ չի մնացալ ժամերըմն էլ գինջ չըն կենըմ ու իստի մին քանէ խրատ տալան բեցի տեղս վէչնը կացի: Հեալա Փառք ի բարձուըսը սկսուալ չար, ճուռաններին սեասը եր իլալ, ետ եշիմ տեսնամ՝ շատ աղօթք ընելան ա, թա հինչ ստանայ ա մտալ մէջնէն, խուխոցս մինին ուրխին ծուլուլն ա քինըմ, մինը պուօշն ա օղտու նման կախ քցալ, իրեքինջինը պերանը դուդոց ա ըրալ հանց եր քաշուալ, վէր ասիս էս ա մ՛ճէգ թուչելու ա ախուշկաւը տիւս կեայ, գեօզալ Սօլթիս հանց օռուալ ա, լհա ասիս տասը տրեկան միսիրհաու թոխարկան ինի, պուչըկուտը նազուս պերանը ժնգունալ ա, աչքերը քեալլան հաքալ մին թեահրը տեռալ, մախլաս, հինչ կխըցուօթուն՝ հու վէր էտ Գարգեաւը անց չար կենըմ, փրթկըցնըմար լիւզ ին կծած հուանըմ, ես էլ ընտեղ եղու նման հեալըմ, տափանի ընցընըմ:

Էտ օրը քանի ժամու մղակաւ վէր նի չի մոխնը, վէչ մին ջահլի եա կուռկու պսուա խեղճ խուխոցս սփաթներին եշից վէչ. քիչոցըմը՝ հու էլ ասել մէ, վէր լխլխալի քինըմ չի՛ն, տղամարթէրը զըրն-դարան ին ընկնըմ, վախըմ ին թա պարան կրկեան իւրեանց տակաւն անին:

Մճէգ վէր իմ մարալ ըխճըկորանց բախտը իստի կապուալ ա, լեաւ պեժինք էլ ճօնիմ վէր թամահ անող տանող ինի, տարաւ էլ, հու ա գիտըմ՝ մին շափթան ետը բեալքեամ գաւի տուաւ թա վէսկի սհաթ եա թոխկայ չքս տուալ, ըխճըկատ եօրղան-դօշակ, ըլթաւայ, լեանգան, բոյահիլի, կամօդ, միժմահի, կեաքայ-կարպետ, խալի, խալիչայ, տըրըկնանոց ու տաշերին մին-մին խալաթ, ես հինչ գիտամ՝ պելուռ ուխսյու, պըլնգանը ալիշի հալաւ եա գառ չարղաթ, տատ-

մարին ու խմորհուցուռն կուրբութայ շալ ըրխալուղացու, սկեսվորն ու պատրուռին մախմուր քիւլք եա բուխարա փափախ ու իստի հղեր ու մին պեներ ու խեղճ խուխիս մին շափթան ետը ըուրփակը կլխաւը քցած խնչրխարաւ ըծելաւ ետ հարանց դարկից, հուց վէր մօղայ ա տեռալ մ՛ճէգ մըզանըմ, բա իմ ճարը հուց կինի, էլ կըկարիմ գինջ սրտաւ բըբանիս թխի մ:

2.

Ասըմ ըն բըբանիս թխի. բըբանիս թխիմ հինչ տեռնայ, թա մեր Բաբա ապերը թատրոնին 300 մնաթական շորերն ու զրթարանքը հաքալ ա տօն տարալ, էլ օղըմ չի ետ տայ, չիւն էտ շորերը քեօհնայ կուրբումն ա իլալ, կուբն էլ փող ա իլալ պրտական տուալ չի, աճրըր մէչին իլած սուամարանին ու մինէրկու վրժըպետու իլած-չիլածն ա եր կալալ գիրաւ. մ՛ճէգ լոխ էլ մտան քցալ ըն ու էս պենին մհար վէչ խօսող կայ վէչ էլ պերան պեցանող. ասի խէ.— Բ. ապերը մեծ մարթ ա, փող շառ օնի, հու կըկարի ասի՝ աչքիտ երայ օնք կայ, թէ կուզ լհա չմկաւ ինի ման կեամ ու երկու դեաստայ փիրփետը մին կապէկաւ առնելու մհար իրեք սհաթաւ չանայ ինի թակըմ:

3.

Բըբանիս թխիմ մէջան հինչ տիւս կեայ, վէր ընցած տունին Ղալին սովգաքեարնէն ու համքեարը թողթ ըն շինըմ, իւրթըմնը օտըմ, շտրափ կտրցընըմ վէր կիւրակի եա աղիզ օրերը դիւբան չբենան, սուրը պահին. մին ամսան ետը մննատակ ըն տուալ իւրանց իւրթըմը, տոնըփակ սովգայ ըրալ, մ՛ճէգ էլ մին թայը պեց ըն անըմ, մին քանէ վախտան ետն էլ հեալքաթ չըուրիս պեց կանին: Վէր ասըմի հիւքի հաւատ չի մնացալ Ղալըմը հատըմ չին, հեալա ինձ տնազ էլ ին տամ:

4.

Ասորմ ըն բլրբանիտ թխի, ախր ծեռքս պանտ ալեամ վէր թխիմ, թա րէայնի շկօլին մոնթերը թողած իւրանց վէսկի կարթմոնքը, քշեր ցերեկ անջախ քէֆի ու կարտի երսյ ըն մէտք անըմ ու ընդրանց ուստաբաշին վէննընէն մին ֆալախկայ չի քցըմ թակել տամ, վէր խելքնէն կլխընէն հւաքուի:

5.

Բլրբանիտ թխիմ հոր սեաս քցիմ, թա Ղազանչեցունց ժամին երայ ասըմ ըն 160 հզեր մանէթ ըն խարջալ ու գանձապետնէն ընտրա հաշիւը շատ թեամիւզ տիւա ըն պերալ, մ՛հէգ օզըմ ըն ժըլովորթին առաճարկին, ամմա ժըլովորթը փախս ա տամ, օզըմ չի հաշիւ տեսնա. ասըմ ա՛ խէ՛, ժամին երալ խարջած փողին հաշիւ կինի՛, բա մեղք ու կրակ չի՛:

6.

Ասորմ ըն բլրբանիտ թխի, հինչ օգուտ վէր ես էլ բիրդան շիլ ընգնիմ թխիմ, թա մին մըծատան տղու բարեգործական ընկերութեան անդամ ըն շինալ հզեր մին միննաթաւ, հեարը եր ա կացալ վէնները տալիը թկելաւ ընկալ թոփխանսն ըստիւր ընդիւր բուզաղա կացալ, թա խէ՛յ ըք տղիս կլխա տարալ ըզգասէր շինալ...:

Տեսնըմ ը՛ն, պարուն կագէթ կիրոյ, հունց մըզանըմ թանգ ա ըզգասէր տեռնալը. ասըմ ըն մ՛հէգ Ղալըմը իծծունա իւիլ ըզգասէր կայ, տակցին վէր իժընանայ, ես էլ ըմ ըզգասէր տոնալու, հինչ կինի կինի, խէր տուող Աստուած:

7.

Բլրբանիտ թխիմ՝ հիւր հինչ դեարդն ա, թա մին քանէ համիայ մարթէք թողթ ըն շինալ ընկալ դեարդոյր, դիւրգեարներին ու բաննահներին օանին ու խաթրիւչին ծեռք ըն քաշել տամ վէր ըշխարի ՚րթըլտետին տէրտէր օծիլ տան, վէր մինակ պընըիէշալը էն ինի, վէր քարոզ տայ, էլ վէչ մին օրէնքու խառնուի վէչ. ընտրա մ՛հար էլ չորս ժամա նշանակալ ըն 300 մանէթ տարին դօնլուլ, 1200 մանէթ էլ հոքեպարձունէն ըն նըլուքաւ կապալ վէր սուամարանը տայ ու չըրու մահ ուստաբաշի եա ՚րժապետ պահին Ղալըմը, թէկաւ լհա սօր էգուց իւրանց փուխելու ինի ժըլովորթը ու թաթիւն եա Մաթիւն հոքեպարձու ճոկելու. վէր էտ պենին ուադի չկընալու: Մախլաս, էս պենըմը մին և կայ ու էտ և-ին մէչին էլ առէ լհա մին պիճի անըննելի և, վէր շատ չի քաշիլ քննելի կրտեռնայ:

Բլրբանիտ թխիմ՝ հիւր հինչ վէճն ա, թա սալգաթ հւրքելին երայ կանդխտորը մըտըրըրկանու եկողներին մ՛հար առաճ մին տաքցի ըն տիրալ, վէր էրկու աբասի ըրզը փուլի տան, մին մանէթ ստուլ փուլի, Նաբաշաթին արխիւի տոնըպեցուք իրեք մնէթան կցած չըրու տասսը, իրեք մանէթ շկօլ փուլի, վեց աբասի մարկախուլի, ըտուր ընդիւր էլ ըջըհամփիւր. մ՛հէգ էլ տաքցին փոխուսլ ա, իրեք մանէթ շկօլիուլի ա, վեց աբասի մարկախուլի, մին աբասի մըրզըրիուլի, Նաբաշաթին էլ իւրան կարքաւը տոնըպեցո.ք, հո՛ւ վէր ընտրանայ իւիլ տայ, վեց ամիս դուստազ կընտորյնին:

Հախն ա, ես իմ Աստուծը, չլուցո.ց. պենա, կործա ըւարայ տեռած տասսը տըսնըհինգ օրաւ կեան Ղալան, քիւչեքըմը

վէր տեռնան, ըստիւր ընդիւր վէզ ծռին, ըզաչին, պղատին
թաքունը՝ թաքուն, աշկարը՝ աշկարը քիւֆտայ օտոզներին խաթ-
րը շահին, վէր տեսնան զիբան հինչ ա տիւս կեալու, հեա-
լա վեց ամիս էլ գուսսազ նստին:

Ասյ ուսհմ պրծենող, մեգեամ տիւ Աւալան չքս մննելու
քու ումբումը... կեամ չքս, շորշուստ էլ ա մին հսցրու մեզ,
ախր տօն տնայքանդ տեռլնք է:

9.

Ասրմ ըն բլբբանիտ թխի, հշտեղ զարաբաղցի կայ աչքա-
լիւսանք ասի, վէր մեր թեազայ կիպիտատին հրամանաւը Թոփ-
խանըմը էլ էշ չքն թողըմ, վէր մարթկանց ջարգըմը կաղնի,
քակըմ ըն քշըմ, չիւն շատ ըն արթմիշ ըրալ, հինչ զրուցում
ասիս իւրանց մնենին տամ ըն հերիք չի, հեալա ըստիւր ընդիւր
թէյն էլ ըն տալիս:

Ախր հոնց թխիմ, քանի վէր շատ մարթ կենգատաւեր
ա էտ կարքատրութիւնան, օղըմ ըն թողթ շինին խնգիր-
քակործ ինին վէր էլհա էրգան անգուճներին իւրանց պը-
պական տեղը կղնըցնին, թա չէ Թոփխանան շնորք ա ընկալ
ա, հանց ա մին զատ կուրցրած ինի:

10.

Ե շ ե ր ա ն պ ր ծ ի ն ք շ ն ե ր ի ն ծ ե ու ք ն ը ն կ ի ն ք :
Ասրմ ըն բլբբանիտ թխի, էս էլ շիլ ընկնելուք նի կեա-
լուք մի օր բիրգան թխեցի, մին սեաս եր իլաւ, թա շտարար
գըտրվերին շները զեմիեմերու մնան քիւչէքը չափըմ ըն, հիւր
տօն ասիս մըննըմ ըն ու մին պեն ուրխած տիւս կեամ: շատ տեղ
էլ խօխայ, ըրախայ բաղրիար ըն ինըմ էտ թազի թուկնան ու
մին մարթ չի կայ, վէր քէֆըներիննի կեայ՝ տանան տիւս անի,

չիւն վախըմ ըն շները կենգատ քինան ու տեարը շտրափու
տակ քցի իւրանց:

Նատերը մեալաւ ըն վէր կիպիտատը էտ շներին մհար
էլ մին կարքատրութիւն կանի, վէր վախտ քէվախտ ըստիւր
ընդիւր տօն վիզիտ չի քինան:

11.

Մ ի ն ք ա ն է ա ն ք ն ն ե լ ի պ ե ն ե ր :

Բլբբանաս հրցընըմ ըն, էս հինչան ա վէր Ալբցէք ախ-
ճիկ ըն տեսնըմ, հաւան կենըմ, նշան տամ, փսականչ անըմ,
փեսախոււմի տամ, օթ ամնան ետը նշանը փողմիշ անըմ, մին
սեւ թիլ կապըմ մտընին, մին սեւ եալլուխըմ տինըմ ետ
զարկըմ:

Բլբբանս ասրմ ա, էս հինչ գիտամ, մանին հրցրէք ան-
տես-անճանանչ խնամոցն անա, մին էլ Հախոււնց գէրան:

12.

Էս հինչան ա, վէր Աւալըմը մին քանէ լիւթրական հա-
ւեր թոխս ըն եկալ հերիք չի, հեալա հընգեր հըրվանու զո-
թուր, թեւը կտարած ետ տկոռ մնացած ճուտերն էլ հետը-
նէն քցած Գարաղներին ծորին կլխին քթոթ ըն անըմ, մին
ճիւղ-ճիւղ անող էլ չի կայ վէր տօն հաքուին:

Տմբլաչի Խաչանը (էս չըմ հա) ասրմ ա, հեալա թող պա-
տառ քթոթ անին, թա վէր իւրանք իւրանց տօն չքն կեալ,
մին օր կըքինամ հանց տմբլիս կըթխիմ, վէր օազ զըրն-զա-
րան կընգնին, թեւ ու թեփուունէն էլ չի իրեալ:

13.

Էս հինչան ա վեր հորեպարծունէն սուս ու փուս սու-
մարանին տիպարանը եօր ըն ծնրմ տարին 500 մնէթաւ, ի-
րեք տարի ժմընակի փոփրաթաւ մին տղու տամ, էն էլ ա-
ռանց գիրաւի, առանց պուբլիկացի ընելի:

Բլրբանս ասրմ ա՛ դէ հո՛ւնց անին խեղճերը, վխեցալ
ըն պուբլիկացի անին, իւրի տուող տիւս կեայ:

14.

Էս հինչան ա վեր կիպիտատին հրմանաւը Ղարադաղ-
ցուց միւհթա տանրմ ըն դիւզին բաղըմը պընըցնրմ պեց թողրմ:

Էտ ընդրանա ա, վեր խեղճերին Աստուծ փեահլայ ա
ստեղծալ դարիթօթուն քցալ, հչտեղ վէչ կենգեատուելու տեղ
օնին, վէչ խօսող լիւզու:

15.

Էս հինչան ա, վեր ֆուրնգիտանայ եկած մին էրկու Ծա-
հինէ մրքընէն բիգած, նեղլիկ շարլարը ցուփըմը բաղուրան
կացած, լհա ասիս զուրազաւ նեստա տուած ինի, բթերը բիզ-
լիկ չեաքմոցաւ, կարճ պլտոխաւ իւրանք իւրանց երայ մաթ
մնացած, շիւտ-շիւտ կեամ ըն Թոփխանան իւրանց նշանց
տամ էլհա մար մտնրմ առանց մինին մ՛չալ քցելի:

Էտ ընդրան մհար ա, վեր Ղլըցէք չէշնա եօր օնին, վեր
իւրանք էլ ֆուանգ տեռնան:

16.

Էս հինչան ա, վեր ըտտարի Ղլին կնանէքն ու ըխճը-
կերքը սաղ քամուտ ըն:

Էտ ընդրանա ա, վեր չըք չըք չըք չըք չըք չըք չըք չըք
տարալ Գ ա մ ու խ ա չ ի ն տակին վառալ, դուդուանչ ըրալ:

17.

Գիտնականէն ասրմ ըն ըրարած ըշխարքըմը մինակ ան-
շունչ պեներն ըն վեր մըծանրմ չըն, էտ զորթ ա՛:

Բլրբանս ասրմ ա, շատ զալաթ ըն անրմ, կլխընէն մեծ
քարաւը կեամ: բա խէյ ա Ղալին կնանոց ու ըխճըկորանց
տիւրնիւրը՝ վեր անշունչ զատ ա, օրն օրին երայ մըծանրմ:

18.

Մին մոնթ փոթըպետան ըրցընրմ ա, ադէր, ասրմ ըն
արթարնէն արքայութիւն ըն քինելու, մեղաւորնէն գժօխք,
բա մին մարթ վեր վէչ արթար ա, վէչ մեղաւեր, հչտեղ
պեղմա քինայ:

Ադէրը պատասխանրմ ա, վերթի Ողիմպոս անրմաւ մին
տեղ կայ, ընտեղ ըն քինալու:

Մհէգ մեր բլրբանին ափաթը կտրած հրցընրմ ըն, թա
Ղլան հչ ա Ողիմպոս քինալու:

Բլրբանս ասրմ ա՛ առաջ ու առաջ էրկանուտեսանց Ա-
կուի բէյը, քմական Նաբաշաթը, կոռնրփուռնոկ Մանաս ապերն
ան Բաբա ապերը, տէր Պազամահն ան Տէր Հախին, տէր
Ակիննան Նիկրիպուշտին, Ծանս քեղ ափի՝ Գաւութ ապերն ան
Թեամիւր ապերը, Բադաս ապերն ան Խէանց Կեափին, առէ
վըռըկալին ջըռ Նազարը մին խիւլայ մօգնի մարթոց նհետ,
վեր վէչ արքայութիւնու ըն հաւան, վէչ գժօխու:

Գաւթարխանոցը միողէքը Ողիմպոսին տակին մին խիւթ
կայ անրմը Ըռըշլաթ, թուշ ընտեղ ըն քինելու:
Թա Ղալին կնանէքն ու ըխճըկերքը հչտեղ պեղմա ինին,

բորա մասին բայաբանա սուս ա անում, գիտում, ա վէր հշտեգ տանին, դինջ նատելու ջրն, եր ըն կրնելու փախչին:

19.

Պարուն կազէթ կիրող, չք չըրքշափթի մըզանըմ մին աղաթ կայ վէր քշերաւ քշրհանայ անխօս եր կրկենան էրկու քար եօր օնին մինը հարամ տեղա, մէկաղը հալալ ու դարադամին հիւրթին կաղնին, քարերը խրիւր քսին ասին:

Աղամ, աղամ՝ լիւն աղամ, վէչիին աղամ, հանէծն աղամ, մունն աղամ, մոծակն աղամ, մլաքն աղամ, մորեխն աղամ, բղոճն աղամ, կարիճն աղամ, մոկն աղամ: մնխլաս, հինջ փիս պեներ կայ, լոխ էլ աղըմ ըն, վէր տարին բախտաւէր ինի:

Ես էլ էտ պըպական աղաթը պհելաւ էտ օրը էս աղամն արի:

Աղամ, աղամ՝ Ալլին տղամարդոց բմբասանքն աղամ, զրպարտութիւնն աղամ, սուտ խօսելն աղամ, փող օտելն աղամ, մին-մինու վըննատակ քանդելն աղամ, քար կտրած խըճ-մտանքնէն աղամ, խաթրիւչիւն մինին տօնը շինելը, մրկաւին քանդելն աղամ, կարտի տալն աղամ, օրը չըրու խրիւգիւնը պարապ-սարապ Թոփխանըմը կաղնելը ու հըլարայ-հըվարայ տիւս տալն աղամ, աղամ եւ աղամ:

Աղամ, աղամ՝ Ալլին կնանոց շուայլութիւնն աղամ, բոխճենին տրաքըմ բմբասանքն աղամ, տնազ տալն աղամ, լիւն օղտ շինելն աղամ, խեղճ ըխճըկորանց երայ փոտ տինելն աղամ, սկեսվորը ես տէքըրկնգանը խըտըհարեին աղամ, մօղ-նի-մօղնի տիւրիւր կեալն աղամ, խելքին ծալը պակաս ինիլն աղամ, աղամ եւ աղամ:

Աղամ, աղամ՝ Ալլին ազիզ-մազիզ ըխճըկորանց տիւրնիւրն աղամ, մէչքին քիֆըմը խեխտած կորսեսն աղամ, հայերէն իմնացած մայեա տոյայա անելն աղամ, երկիրը թողած՝ աստ-

դերան խօսելն աղամ, հպարտութիւնն աղամ, մօղին եախան փոնելն աղամ, պլկովի մղուրկայ պար կեալն աղամ, կուք ես ծռղարթար քինալն աղամ, ըստիւր ընդիւր նհետ սիլիբիլի անելն աղամ, աղամ եւ աղամ:

Աղամ, աղամ՝ Ալլին գեօղութիւննէն աղամ, մարդասպանութիւնն աղամ, խանչալ թխելն աղամ, քարաւ կիլօխ ճիճեխելն աղամ, դաւի, շաւի հարայ-հրոցն աղամ, Թոփխանին էշերն աղամ, ըխպըհրերին ու տներին կուտված զիբիլն աղամ, քիւչոցըմը ստակած շոնն ու կատուն աղամ, դումարբազներին վէգեղն աղամ, կարտոժ-նիկներին կարտերն աղամ, մունթերին պապիրող քաշելն աղամ, շիրաչխանոցըմը հարբածներին բողազն աղամ, պոլիցխանին մեծ քոնն աղամ, աչկըներին կոխած ճպոռն աղամ, աղամ եւ աղամ:

Աղամ, աղամ՝ Ալլին փալչէքն աղամ, ջինդարն աղամ, հային դալլաք, թորքին Թաուրահ հեաքիմն աղամ, վախ չափող, կեարի բցող, սրտմնայ հաքող, մուս թափող կնանէքն աղամ ու ընդրանց հատողներին, խելքն աղամ, աղամ եւ աղամ եւ զօրութիւն ի Տեառնէ ինդրեմ: ամմէն:

ԵՄ ԳՅԱԳԸ:

Ի թիւին 1887 յուլիսի 5-ին ես Եօշվա Ալլին Բըրփարք քիւլին երայ կենող Տմբալաչի Խաչանս աչքերս պեց, օշըս կլիխ տաղ-սալամաթ իմ տանը նստած էս կտակը կիրեցի ու կտակակատար նշանակեցի դամբաշ Ակունին, դաւալ Պուշուրին, դիւրիւլի Աանուն, տիմըլիպտոյ թխող Դանակոյուն, խաղ ասող Աբդուլ-Ասարմին, թեառչի Մինասին, քեամանչայ աճող Մաղաքին, փող փշող Աերդուն ու մին խելայ մարթոց, վէր Ալլին մեծ ու պուճուր հսկանայ ու իմ մունելան ետը զահ-

լայ չտանի, թա Տմբաշի Խաչանը կտակ չի ըրալ ու մեհհրմ թրալ իւրան շարժական ու անշարժ կայքը, վէր էքսան օրը կուածմունք չի տիւս կեայ:

1) Առաջ ու առաջ կասիմ վէր ես մեր տնացուն անա գիւման մին անշարժ կայք չօնիմ, ընդրա ծեռք տուողը հօրաւ, մօրաւ իրեք կտոր տեռնայ:

2) Շարժական կայքս օխտը հսած-փսած ըխճրկերքս ըն Հուռին, Սօլթին, Գիւլին, Շուղին, Նազլուն, Յլօրենցիան ու Մարգրաֆիան. թա վէր սրանց ամեն մինին մին եղուտ փեայ ճարուեց, վէր պեժենքու թամահ չրաւ, քարը կիլոխ թա քոռ ինի եա քաչալ, թող տանի խէրը տեսնայ, ամմա ետ հեարանց չի զարկի, թա վէր իտինը ճարուի վէչ, ա՛ն շ ա թ կ ա յ ք ի մ է ց կ ի թ ու ի ն ու: մինը փայլի տեռնայ, մինը թղթարար, մինը կեարի քցող, մինը վախ չախող, մինը սրտըմնայ հաքող, մինը մըուտ կիրիզմանու երայ ճիւր խմը ցնող. մախլաս, պենի կեօրծի կենան, վէր խախըր ափի վէչ էս հինչ անփիշ անփթրոկ զատեր տիւս եկին Խչանին ըխճրկերքը:

3) Շարժական ու անշարժ կայքս իստի կարգի տնելան ետը իմ կտակին էս ա Ղլլցուց մհար.

ա. Հարուստներին կտակ ըմ անըմ փուրընէն հինչքան կարըմ ըն մըճըցնին, կլխընէն հստըցընին, ալքաա պարեկամա հեռու շոռ տան, թատրոն չի քինան, բարեգործական ընկերութեան անդամ չկիրուին, կազէթու եա կիրու փող չի տան, քանի վէր ուէգան էլ ա կարթիլում. մախլաս, սոււարանա, վանքա հինչ վէր օգին, ասկազ անին, չիւն ըտրանք լոխ էլ փողի թալակ ըն, վէր մին հետ սխալուեցիր ըզգասէր տեռի՛ր փող տուի՛ր, էլ պուկուստ բեարաքեաթ չի մնալ, էրկու տանըմը մէչքա ջիտուլ կրտեռնայ, փորըտ էլ մէչքատ կենայ:

բ) Հարուստներին կտակ ըմ անըմ՝ ամեն ըուաօտ սուրք ծագին Թոփիանան տիւս կեան, հշտեղ մին ըժընագին ուտելու եա խմելու պեն կայ, առաջ իւրանք առնին, վէր քեասիք քիսուքու տակին դատ չմնայ, չիւն քեասիքը լհա քեասիք ա մնալու, ընդրա պենը խէր ա, հոռնց վէր ինի մին թեահրաւ եօլայ կըքինայ, ամմա հարուստը վէր փոռնօր մին կպրկանուց փիրփետին երայ իրեք սհաթ չանայ չթակի օխտը մին շեահաւ առնի, էքսան օրը տօն տնաքանդ կրտեռնայ:

գ) Սովդաքեարներին կտակ ըմ անըմ՝ հինչքան կարըմ ըն ստտ ափն, աշխարս դորթու սարի չի, կեազըմը ճիգ տան, լեաւ ապրանքը նշանց տան, փիսը երայ կապին, Նիժնայ, Մուսկովայ, Մարսելիա նիսիա ապրանք առնին, մին տոռնան ետը կտոր ընկնին փողերը տակաւն անին, էրկու տոռնան ետը էլհա իւրանց էլը քչին. մախլաս, ըշխարիս ըզաթաւը քինան, չիւն հաստ ու պերակ մին գին օնի, վայ պերակ մընողին:

դ) Տերտէրներին կտակ ըմ անըմ—իւրանց կարգին հաստատ կենան՝ քրողա, ըղօթքա հըռանան, տէկ ու տկճորա մուտանան, հասը չհաս անին, չհասը հաս. տօնեա կիրեզման ուրհնելուց, փսակ եա նշան տինելուց եա չէ մեռալ թղեղուց հշտեղ մին քեօք կեռէք կտրելի տեղ կայ, լօխ ընտեղ հաս քուին, հշտեղ լղար անդի տեղ ա, ծրոքընին լանան ետ կեանան. մին էլ թա վէր ժամի շինութեան եա թեազլամիշ ընելու աւելնորդ տախտակ, քեարփուչ եա կէր ինի մնացած, տօն տանին միւհտայ պընըցնիմ, չիւնաստաճ ա. «միւհտայ առէք, միւհտայ կոլ տուէք»:

ե) Հեաքիմներին կտակ ըմ անըմ՝ իւրանց խէրին մհար ուեցեպտին գինը խճընցնին, ջրի գին շինին, վէր նըզանտոց շտանայ, թա չէ էրկու իրեք մնէթաւ ուեցեպտ կիրին, երկու

պրաշոկ խիննի սօլ խմբցնին, նաչաղը էլ դալաթ չանիլ իւրան օրըմը մին էլ նչըղանայ եա հեպքիմ կանչի:

դ) Գանձապետներին կտակ ըմ անըմ իւրանց ծիւքան փող չքցին ժամին մուսին դախլը, մին էլ թա՛ վէր քեօհնայ խաչ ու խաչուառ ինի, թողեն վէչ փչանայ, եօր ծնին կէսը չալու ու հացի քթոլ շինել տան տանը պընըցնին, կէսն էլ խաչ շինին իւրեանց յիշատակը երան կիրին ու վասն ազգասիրութեան ու բարեպաշտութեան ֆլանքետսին նման ժամին նուիրին:

է) Զատէկ ախար օրը մատաղ պրժընողներին կտակ ըմ անըմ, վէր ամեն հարուստու տօն մին-մին բաղեա եա ունկնաւեր կճոճ տըմը կաջիւր դարկին վէր շիլաճաշը եղալի տիւս կեայ, պորտընէն եզրկալի, էլ դաւի-դառաբայ չի սարքին. ամնա մնըջրան շատ հթընաթաւ քեասիրք-քիսուբու պրժեհնին, վէր իրեսին եղու իշիլթու չինի՝ խեղճերին փուրըհալքէնք քցի, իւրեանց էլ մեղքու տակաւ անի:

ը) Խնդիրքակործ ինողներին կտակ ըմ անըմ՝ ըւըլվաթ ասած պընելին՝ վէր հշտեղ քինան նհետնին տանին ու մեծան կցած չրու պուճուրին թեաւազայ անին. չիւն էա հանց պընելի ա, վէր սըտընու ֆանդ ու ֆիլաւ շինած քիլիգն էլ կըպենայ:

թ) Ախճիգ մարդու տուողներին կտակ ըմ անըմ՝ թա՛ վէր օղըմ ըն իւրանց խուխին բախտաւերութիւնը, փրսին լեաւին ու վատին եշին վէչ, ասը եա օջաղը պտըւին, ուսումը, խեղքը, բնօթիւնը, ջահիլ եա ահիլ ինիլը հրցընին, մինակ եշին վէր փեսան փուղաւեր ինի, փուղաւեր, թէկուզ լհա ինքը երկու վըննանէ մին մաղի տոպրակ, մէջն էլ սըմանաւ լիգը պատն ի եր տիրած:

ժ) Փսակուղ տղին կտակ ըմ անըմ՝ լեաւ ֆռանտ կեւնուայ, բեղերը սրի, մեծ-մեծ պեներա դուռըցնի, մեծ-մեծ տղերա փուռըցնի, էլ հրցընի վէչ ըխճկան սէրան, խեղքան, շրորքան, նստել եր կընալան, եա իւրան ճուբան, թեաք հանօրը շահի-քիստի ինի՝ ըխճըկան բուլամայ փայ ու պեժինք տայ, մին էլ երգան լիւզու, վէր իւրան շառա, փուրցանքա ազատ պահի:

ժա) Վրժըպըտներին կտակ ըմ անըմ՝ հոքըլըրժոնոցը սաղին մոէկ տան, հինչ հաւայ աճըմ ըն, էն հաւան պար կեան. մեր խուխոցն էլ Ասծու սէրին Սաղմուս ժմագիր տեաս տան, մին էլ սանաղ կիրելը սվրցնին, թա՛ չէ՛ շան, գիւլու, չղալու հեաքաթնէն իմ պապ Միրզաջանն էլ շատ կըգիտար. ըտրանցա խկի փայտայ չի կայ, մեր խօխէքը դուռուակ ըն մնըմ:

ժբ) Ուսում առած տղոցն ու մարթոցը կտակ ըմ անըմ՝ վէր Ղալին գրվազաւը մնըմ ըն, իւրանց ուսումը ծալին ճուբներըմը տինին, չիւն մեր Թոփխանըմը կուրսը վրջըցրածնէն էլ հերիք ըն վէր Ղալան լուսաւերին:

ժգ) Կիպիտատին կտակ ըմ անըմ՝ ամեն պուազնիկի, կիւրականց կիւրակի եա շիթըմէջի ըստիւր ընդիւր տօն օրը բաղաքի հաշուաւ թլըղրամ թիսի շնհաւեր անի, վէր գիղան քերժին գլխին մին՝ Ղալայ կալ, մէջին էլ մին պեն հսկացող կիպիտատ:

ժդ) Թիլ ու սպիրտ քաշող զաւօղչիկներին կտակ ըմ անըմ՝ ստընու ֆանդուֆիլաւ հաքած փուղընէն պենդ պահին ու էտ փուղերաւը պեհ ու թոխը առնին մին-միսու մննատակ քանդին. դարիբու թիւնըմ ստո ճգնաւեր ձեւանան, վէչ-խարի մորթի կենան, Ղրըբաղըմը գիւլ տեռնան չլուցուց ջա-

նին ընկնին, ընդրանց խուխոց ուռզին կտորցնին — մին տան՝
էրկու առնին, էրկու չափին՝ մին կտորին, էրկու քաշին՝ մին
եօր ծնին. մախլաս, հալալ ջաֆայ հեռու կենան, չիւն ասուած
ա՛ հալալ հացաւ փոր չի կշտանալ, հալալ ըշխրտանքաւ խո-
խայ չի պահուել:

Ժե) Գիտնականներին կտակ ըմ անըմ՝ իւրանց գիտու-
թիւնը ծալին զրազ տինին, կեան իրեք տարի փափուկ վրժը-
պետին քշտին սվերին դիպլոմ առնին. չիւն շատ նոր պեներ
կայ, վէր իւրանք հեալա խաբար չըն. քեզ ըրէնակ աշխարհա-
գրութիւն կիրողնէն կրավերին վէր Հայաստանըմը մին քաղաք
կար անըմը Ա. ն ն ա քաղաք. քերականութիւն շինողնէն կրափե-
րին վէր «չակերտներին» չանկեր պեղմաւ ասել . թրգամանիչնէն
մին էլ բուարան շինողնէն՝ ВЪ САМОМЪ ДѢЛѢ-ն իւր ան գոր-
ծին մէջ կրթըմանին, РУКОВОДИТЬ բառն էլ՝ ձեռք բե-
րել ու խտտի մին խիլայ թեազայ պեներ...:

Ժզ) Բախկալ Ծատուրին կտակ ըմ անըմ՝ Խուբարանց ու
Այդինանց պաղ-վալը, թող հինչքան զօւրմնան զեաւըմը կայ
կեարմիր ու սիպտակ գինան խմի, քէֆ անի, դիւշմանին աչ-
քը հանի, մին-մին էլ էրկան շիրեփաւր եասաղույներին կլխին
թխի, թա չէ վէր օշը կլխին պահեց, օրը քիտօրին էլ էտ
զինջիլայ պեց ընկածնէն խնչալաւ ըն նհետը խուսելու ու Թոփ-
խանաւր ընցնող օղուշաղներին բաղրիար ընելու:

Ժէ) Ըշխարի վրժըպետին կտակ ըմ անըմ՝ իւրան իրեք
տարուայ պընըրցած նաւը, վէր հուքըպրծոնոցը ու Ալըցույ
մհար բուլամայ խոնկ ու փուրլառ բեռնած յուճիսին սաղ-
սալամաթ պերաւ Ալին քերծին՝ դէմ ըրաւ ե ա կ օ ր ր ք ց ե ց .
մհէգ ասըմ ըն սեպտեմբերի քամուն ա եշըմ, վէր ելքեանը
պեց թողի էլհա մին իրեք տունան վըդի Այիբալուին նան

Քարին տակի ծովերին արալըմը դարեբուլթուն քաշի, ջուռայ-
ջուռայ ապրանքնէ պերի. Աստուծ պարի ճանապար տայ,
պարով քինայ, պարով կեայ. ամմա մուռանայ վէչ կեալուց
փափուկ վրժըպետին մհար էրկու տիւթին կեռէք
պերի, դէր Ալըքսանայ մհար մին քրուզա կիւր, մին էլ
մին Ե փ ր ե մ վ ե ր դ ի, մին քանէ պիծի-միծի վրժըպտո-
ներու մհար էլ «Մ ա ր ե ն ի լ ի ւ զ ու լ»:

Ժը) Ազիզ-մազիզ ըխճըկորանցն ու կնանոցը կտակ ըմ
անըմ մեծ ու պիծի գեանգեակնէ՝ վէր իւրանց տիւրնիւրին
կլխան կախ տան, քողն էլ ճեռքըներին փռնած պահին, վէր
ճնապար քինալիս եա բուլվարըմը մանկեալիս հեար երգայ
զինգակին տան, մարթէքը հեռի կենան, թէշնա չէ Ալըցէք
անթեալիմ զատեր ըն, ֆեահյու կրտան խեղճ տիւրնիւրին
վէզը ճռին մաղբուն անին, համ իւրանց անըմը կտորին,
համ ընդրանց ջեարմու տակ քցին:

Ժթ) Լիւտրիկաններին կտակ ըմ անըմ՝ Միրզաջանին
չորս պատերը իւրան անհամ քրողներաւը:

Բագուայ ամեռնը Աալան եկող բելա շխմատ բարմալ
օլմազ կնանոցը՝ Թթոյ ջրին դեօշերը:

Պօլիցխանին՝ Դաբաղներին ճեօրը՝ լեմնին տանը քշտաւը
բաշաշաղայ ընկած զախողներին պեց լաղըմը, Աալին կեօղու-
թիւննէն, հարայ-հրոցը, թակն ու մհակը:

Ա. Դաւութին՝ սարին էն զօլայ եկած չուրաթանը, բզկա-
թանը, շիլիպլիլիթն ու միւզիւկը, քլըխնձորն ու տզգանը,
զկեռն ու խնճլոզը:

Աւագ ապօրը՝ հոքի արքայութիւն:

Բաբա ապօրը՝ լեաւ իշտահ:

Մանաս ապօրը՝ ամեն չափի հաբեր:

Լեանկ-Քեամիւրին՝ փողի տոպրակնէ, իժընագին բարե-
պաշտութիւն:


Սուամարանին հողերին երակացուին՝ փանքին ծմակնէն:

Կանգիստորականներին՝ Ղարաբաղը իւրան գէրերաւը,
ժրգովուրթաւը, մեռալաւն ու կենդանաւը:

Ջահիւններին՝ Պեխի աղբիւրը, Չեաքմա գեօլը, Նախշուն
գեօլը, Բոտա գեօլը, Սլմազ աղբիւրը, Խանքեանդու մատուշկէքը:

Տմբլաչոցը, գուռնաչոցը, թառչոցը, խաղ ասողներին ու
մեր հեամքեարին՝ Ղլըցուց շաբաշ տուած կապէկնէն—լեաւ-
լեաւ ուշունցնէն:

Էս տըմըրինը զալամ կտակը ընելան ետը վերջին դեօ-
նըմ՝ Տմբլիս նան Բլըբանիս թխըմ ըմ, Ղլըցուց մնաս բարով
ասըմ, կուպընէս աէն տինըմ:



Գ Ի Ն Ն Է

Պ ա տ կ ե ռ ո վ 45 կոպ.

Առանց պատ. 35 կոպ.

2013

13597

